

97

= 97 = Ո. ԱՌՋԵՆՏԱԵԼԴ

Պ Ը Ա Ֆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պ Ը Ա Կ Վ Ի Ա



ԱՄԱՏԵՐԴԱՄ ՑԵՎ

===== ՄՈՍԿՎԱ =====

№ 38

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԵՍ
ՏԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԱՄԵ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾ ԵՆ ՏԵՍԵԼ

— ३५४ —

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն

R.
q.

- | | | |
|--|--|----|
| 1. Ա. Լազովսկի | — «Հոռանքների ողայքարը համաշխարհ հային արհամագութեան մէջ», (սպառված) | |
| 2. » | » «Արհմիությունների ինդիբներն ու գործելագիրպը», (սպառված) | |
| 3. Ե յ դ ո ւ ս | — «Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին», (սպառված) | |
| 4. Արկ-Ա. Ա. | «Բանվ. շարժման պատմ. Անդիալիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում», (մանացել են սակավաթիվին որինակներ) | |
| 5. | «Գործարկումների և տեղկումների ուղեցույց» | 1 |
| 6. | «Աշխատանքի որենսպեքը» | 15 |
| 7. Անոնչկին | — «Պրոֆեսիոնալ շարժումն թուսաստանում», (մանացել են սակավաթիվին որինակներ) | |
| 8. Սենյաւշկին | — «Գործարկումների և տեղկումների անհրաժեշտ ներկա պայմաններում» | 25 |
| 9. Գուրեվիչ | — «Լենինը և արհմիությունները» | 50 |
| 10. Ֆարբիկան | — «Մոցիւալական ապահովագությունը», (սպառված) | |
| 11. Տ ե տ ե ր ի ն | — «Ի՞նչ և արհմիության կանոնադրությունը» | 25 |
| 12. Սպերանսկի | — «Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մայր» | 20 |
| 13. Բիլովսկի | — «Բանվորների և ծառայողների սպառագործությունը հաշմանդամության դեպքում», (սպառված) | |
| 14. «Կանոնադրություն բանվորական գրադարանի» | | 15 |
| 15. Զ ե կ ի ն | — «Ակնարկներ բանվորական շարժման պատմությունից» | 35 |
| 16. Բ ժ. Մելիքյան | — «Միջիւլո» | 20 |
| 17. Բ ժ. Կարապետյան | — «Մալարիա» | 5 |
| 18. «Յերեք ինուրնացիոնալ» , (սպառված) | | |
| 19. Գ ի ք ի ն ի ս | — «Ի՞նչ և արհմատական արտադրական միությունը» | 30 |

VSP2B

692
880

331.88

Պրոլետարմեր բոկը յերկրմերի, միացե՛ք.

Ո. ՌՈԶԵՆՖԵԼԴ


ԱՄՍՏԵՐԴԱՄ

ՅԵԿԱ

ՄՈՍԿՎԱ


Թարգմ. ՀԱՅ. ՏԱՐԵԼԻ 280. Ն

ՊՐԱԿ VІІІ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 38



ՑԵՐԵՎԱՆ

1926

Եարկած ե «ԼինՈՏԻՊՈՎ»



880 - Կ9-7

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպիվար 442 ր.

Պատովեր 2297

Տիրամ 1500

ԱՐՄԱՆԻ ՏԵՎ ՄՈՍԿՎԱ

(ԱՐՀԵՐԻ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՄԱՆԻ ՏԵՎ ՄՈՍԿՎԱ ԴԵՂԻ ԽԵՂԻ ԱՄԱՆ ՈՒ ՊՐՈՖԻՆՏԵԲՆԵԼ)

ԱՐՀԵՐԻ ՄԻԶԱՉ-
ԳԱՅԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ
ՄԻՆՉԵՎ 1914 ԹԻՎԻ
ԱՄԱԳԻ այն ընդհարման մեջ, զոր տեղի ունի գեղին Ամստերդա-
մի Խնտերնացիոնալի և կարմիր Պրոֆինտեբնի միջև։ Ի՞նչպես ե-
ծագել Ամստերդամի Խնտերնացիոնալը։ Արդեն 19-րդ դարի վեր-
ին կապիտալիզմը ստեղծեց այնպիսի հզոր միավորումներ՝ ուղա-
րեսաներ, սինդիկատներ և այլն, առանձին յերկրների շահագոր-
ծողները բանվոր գասակարգին միջազգայնորեն մնշելու համար
այնքան սերտորեն կապվեցին միմյանց հետ, վոր բանվորությունն
ել ստիլված յեղավ լրջորեն մտածելու միջազգային մասշարով
ինքնալաշտպանություն կազմակերպելու մասին։ Քաղաքական
ինքնալաշտպանության համար նա ուներ «Յերկրորդ Սոցիալիս-
տական Խնտերնացիոնալը», վոր, ճիշտ և, անհուսալի կերպով
թաղված եր համաձայնողականության ճահճում։ Խոկ արհեստակ-
ցական կազմակերպությունների համախմբման, միացման համար
1902 թվին առաջ յեկավ Արհմիությունների Միջազգային Քարտու-
ղարությունը։

Սակայն նա «միջազգայնությունից» դեռ շատ հեռու յեր, թեև
1912 թ. նա արդեն համախմբում եր 19 յերկիր 7,394,461 բանվոր-
ներով, բայց այդ բոլորը միայն յեվրոպական կամ անգլո-ապրո-
նական յերկրներ եյին։ Բացի դրանից, Միջազգային քարտուղա-
րությունը զեկավարող կազմակերպությունը պայքարի կազմա-
կերպություն չեր։ Դա միջազգային վիճակագրական բյուրոի նը-
ման մի բան եր, վորտեղ զանազան յերկրների միությունները ծա-

նոթանում ելին իրենց հարեանների պրոֆաշիստանքների վիճակի հետ :

Բացի Միջազգային Քարտուզարությունից, կային նաև 32 միջազգային միավորումներ կամ ըստ արտադրությունների «արհմիությունների ինտերնացիոնալներ» , որինակ՝ մետաղագործների, փայտագործների, ջուլհակների, գլխարկակարների և այլն . Ավկայն, այդ «ինտերնացիոնալներն» եւ միայն թղթի վրա գոյություն ունելին : Յերբեք չի պատահել, վոր մետաղագործների արտադրսական ինտերնացիոնալին հաջողվեր մի քանի յերկրներում միաժամանակ կազմակերպել յելույթ, մետաղագործ բանվորների գործադուռ : Միջազգային Քարտուզարությունն ու 32 արտադրսական ինտերնացիոնալներ վոր բանդից պիտի ձեռք բերելին հեղափոխական եներգիա և ույժ, յեթե նրանց իրենց ձեռքն ելին հավաքել անդիմական և գերծանական համաձայնականները, մանափանդ վերջինները : Միջազգային Քարտուզարության վլուխը կանցնած եր անպիսի մի թունք ու եփորմիստ, ինչպես Կարլ Լեգինն և՝ գերմանական Արհմիությունների Գերագույն Հանձնաժողովի նախադատությունը, իսկ 32 արտադրսական ինտերնացիոնալների քարտուզարության 27-ը գերմանական արհմիությունների ներկայացնեցիներ ելին և դանդում ելին Գերմանիայում : Այսպիսով, Միջազգային Քարտուզարության մեջ մտնող բոլոր միությունները փոխանակ իրենց ույժերը միացնելու և միջազգային կապիտալի գեր կովելու, նրանցից ամեն մեկը սուս ու փուս զնում ելին իրենց ազգային բուրժուազիայի հետեւ և ամեն կերպ ոգնում ելին նրան :

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ
(1914-1918 թ.)

Զարմանալու վոշինչ չկա, յեթե հենց վոր համաշխարհային սպանդանցն ակուցից, բանվորները (Ճախ առցիալիստ Գուստավ Երվեյի պատկերավոր բնորսչումով անհլով, վոր հետո դարձավ թունդ ու հարյուրակային), վորոնց պատերազմի յերկաթե թաթը բռնեց կոկորդից, բարձրացրեց ողի մեջ և նետեց գետին, նախ և առաջ զգացին իրենց հայրենի հողը . բանվորներից ամեն մեկը, նետված գեպքերի այդ փոթորկի մեջ, ընկազիր հայրենի յերկերը» : Դա պետք և այն մտքով հասկանալ, թե պատերազմին հայտարակվելուց հետո, արհմիությունների դեղին առաջնորդները ամիշշապես և աշխարհ նետվեցին իրենց հայրենի բուրժուազիայի գիրկը : Փոխանակ պատերազմի դեմ առնվազեն

Հեղափոխական պայքար մղելու, վորի մասին իրենք և իրենց «պատվավոր» ընկերները Յերկրորդ Խնտերնացիոնալից գոռում ե-րին փողոցների բոլոր անկյուններում, գեղին պրոֆրյուրոկրատ-ները, Հայութարարելով «Հայրենիքը (իմաս-Հայրենական բուրժուա-զիայի շահերը) վեր ամէնից» դապահանական լոգունզը, —իրենց խարած բանվորներին տարան յեղբայրապան սպանդանոց, դեպի մահվան :

Յերկրորդ Սոցիալիստական Խնտերնացիոնալի նման արհմիու-րյունների Միջազգային Քարտուղարությունն ու նրա 32 Խնտեր-նացիոնալները նույնպես քանիվեցին ամենայն հեշտությամբ և ա-րագությամբ : Մանավանդ, վոր ուազմական փոթորկի և մրրկի մեջ բոլոր յերկրների արհմիությունները ծանր կորուստ սոսացան, զո-րակոչները նրանց չարքերից խլեցին հարյուր հազարավոր անդամ-ներ : Այսպես, Գերմանիայի «ազատ միություններից», վոր 1913 թ.-ունիցին 2,535,000 մարդ, 1916 թ.-մնաց վոչ ավելի 966,000-ից, իսկ ամբողջ գերմանական արհշարժումը 3½ միլիոնից կրճատվեց և հա-սակ մինչև 11½ միլիոնի : Ֆրանսիական միություններում 1913 թ.-կար 1,000,000 անդամ, իսկ 1915 թիվի գերջին մնաց վոչ ավելի 300-400,000 : Միայն 1918 թ.- գերջերին՝ արհմիությունները կամաց-կա-մաց սկսում են կազմությել : Անգլիային եր, վոր իբրև հնագույն և առավել հզոր արհշարժում ունեցողի, հաջողվեց միությունների թիվը պահել անփոփոխ, իսկ 1917 և 1918 թ.- նույնիսկ ավելացնել 2 հինգ միլիոնով : 1913 թ.- այսուհետ կար 4,192,000, իսկ 1918 թ.- 6,624 հազար :

Ֆրանսիայի, Անգլիայի, Բելգիայի գեղին արհմիությունների լիզերներն (առաջնորդները) այնքան ստորացան, վոր 1916 թ.-ի-րենց բուրժուազիայի հետ կատարյալ համաձայնության գալով, վորոշեցին հետացնել գերմանական բանվորներին արհմիութենական Խնտերնացիոնալից և հիմնել իրենց, անսանտյան արհմիութենա-կան Խնտերնացիոնալը Լիբուում : (Դրանից վոչինչ գուրս չեկալ) : Կարև լեզինն իր կողմից փորձեց հին Միջազգային Քարտուղարու-թյունն ողտագործել կենտրոնական պետություններին՝ Գերմա-նիային և Ավստրիային ոգնելու համար : Այսպիսով արհմիություն-ների գեղին առաջնորդները բանվոր դասակարգի միջազգային հա-մերաշխության քարր քարի վրա չթողին :

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ : Պատերազմը վերջացավ, միլիոնավոր ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ԻՆՏԵՐ- բանվորներ վերադարձան ճակատից և ՆԱՅԻՌՆԱԼԻ ԾԱԳՈՒՄԸ: նորից լցրեցին գործարանները. պատե- րազմից քայլայլած ՅԵՒՐՈՎԱՐԺԻ ժա- զովրդական տնտեսության մեջ ուսումնական ծանր ճշնաժամ: Այս բոլորը նորից վերականց բանվորական լայն մասսա- ների պայքարը կյանքի լավագույն պայմանների, բանվորական չարժման աճման համար:

Այստեղից ե բնիւում անդամների մասայական հոսանքը դե- պի արհմիությունները, շարժային բանվորների հոսանքը, վորոնք իրենց պաշտպանությունը վորոնում եյին կազմակերպվածության մեջ: Այսպես որինակ՝ Անդլիայում 1918 թ. կար 6,624,000 միու- թյան անդամներ, իսկ 1920 թ.—8,025,000. Գերմանիայում միու- թյան անդամների թիվը 1,665,000-ից (1918 թ.) աճում է և 1920 թվին հասնում—մինչև 12,000,000, ֆրանսիայում—300-400,000-ից (1915 թ.)—մինչև 2,500,000-ի (1919 թ.), նույնիսկ Ամերիկական Աշխատանքի Ֆեդերացիան, վոր 1918 թ. ուներ 2,500,000 մարդ, 1920 թ. հասնում է մինչև 4,078,000-ի: Այսպիսով, յեթե միջազ- գային արհշարժումը մինչև պատերազմը ընդգրկում եր վոչ ավե- լի, քան 10-12,000,000 մարդ, ապա 1919 թվին նա ընդգրկում է մի հսկայական 40,000,000-անոց բանակ:

Միջազգային կազմականացներն արդարացիորեն վախճառում եյին, վոր բանվոր դասակարգը, զարթնելով ուսումնական թմբիրից, հիմնավորապես վշրելու յե իր ճնշողների վիզը (Խորհրդային Հան- րապետությունն Արևելքում մի սպառնալից նախազգուշացումն եր նրանց համար), ուստի և վորոշում են կափարիչները մի փոքր բանալ: 1918 թ. ֆրանսիայում, Գերմանիայում և Անդլիայում,— վորտեղ որենադրական ճանապարհով, վորտեղ ել առանց դրան— մտցնում են 8-ժամյա բանվորական որ: Բուրժուազիան 1919 թ. հոկտեմբերին չնորհալիորեն խաղում է, այսպես կոչված «Կա- շինդտոնի դինաթափման կոնֆերենցիա» կատարկերգությունը: Այդ կոնֆերենցիան հաստատում է 8-ժամյա բանվորական որվա- անհրաժեշտությունը և, բանվորների շահերը պաշտպանելու նը- պատակով Ազգերի Լիգային կից կազմակերպում է ծնված որից արդեն մեռած տիրահռչակ «Աշխատանքի Միջազգային Բյուրոն»: Յեկ վորովհետեւ գործարանատերերն ու բուրժուազիան, ըստ յե- րեռյմին, բանվորական շահերն ամենքից լավ են «պաշտպա-

նում» , սւսափ և բնականաբար նրանք այդ Միջազգային Բյուրոյի կազմի մեջ ստանում են մեծամասնությունը : Բյուրօն բաղկացած է կառավարությունների 12 ներկայացուցիչներից , ձեռնարկողական կազմակերպությունների 6 և զեղին արհմիությունների 6 ներկայացուցիչներից : Աշխատանքի Միջազգային Բյուրոյի նախագահ է նշանակված բուրժուազիայի հին , փորձագած լակեյներից մեկը՝ ուժիորմիստ Ալբերտ Թոոման :

Բանվորական շարժման աճումը , պատերազմի վերջանալն ու Ազգերի Լիդայի վրա դրված հույսերը ստիպեցին բոլոր յերկրների զեղին արհմիությունների առաջնորդներին համաձայնության գալ և վերականգնել Արհմիությունների Միջազգային Խնտերնացիոնալը : 1918 թ . հուլիսին , Ամստերդամի կոնգրեսում , նախկին Միջազգային Քարտուղարության փոխարքեն ստեղծվում է Արհմիությունների դեղին Ամստերդամի Խնտերնացիոնալը : Սակայն այդ նոր Խնտերնացիոնալն ավելի ժիշ եր տրամադիր պաշտպանելու բանվոր դասակարգի շահերը , քանի նրա նախորդը՝ Միջազգային Քարտուղարությունը :

Լողարով «Հաղթողների» , համաձայնողական բուրժուազիայի փառքի ճաճանչներում , Անտանտայի յերկրների արհմիությունների առաջնորդները ճիրանների մեջ են առնում գերմանական արհմարդումը : Լեզինի փոխարեն Ամստերդամի Խնտերնացիոնալի նախագահ է ընտրվում Եպլատոնը (Անդլիա) , իսկ առաջին փոխնախարական՝ Ժուն (Ֆրանսիան) : Անդլիական , Փրանսիական և բելգիական արհմիությունների զեղին առաջնորդները շեշուակի նայելով գերմանական բանվոր դասակարգի ներկայացուցիչներին , ազգուկերպով սպառնում են : թե՝ «Գերմանիան պետք է վճարի ունպարացիաները» (վնասների հատուցումները , այս գեպքում՝ պատերազմական) : Այսպիսով , տեսնում ենք , վոր գեղին արհմարդման վերին զեկավար սրտերում առաջիւ նման պահպանվել են հին մրցությունը և ադդային թշնամությունը : Միջազգային կոնգրեսներում Գերմանիայի և Ավստրիայի ներկայացուցիչների ներկայությունը միայն համբերում , տանելի ելին համարում : Նորաթուխ Խնտերնացիոնալը վոչ միայն բանվորներին կոչ չեր անում կապիտալի դեմ հեղափոխական պայքար մղելու համար , այլև շողոքորթաբար քըսմակում եր Ազգերի Լիդային , իմպերիալիստ-թալանչների այդ միջազգային ընկերությանը : Ամբողջ բանվոր դասակարգին նա աւագարկում է աշխատակցել իր բուրժուազիայի հետ և պրոլետա-

բական դիկտատուրայի իր հեղափոխական իրավունքը փոխարինել բռնը ու ական Ազգերի Լիգայի և Աշխատանքի Միջազգային Բյուրոյի յեղանով ստուցին գրած պարագ ու անարժեք իտասումներով:

Բայց դա բոլորը չեն վոր մի վորնե տեղ բանվորական շարժումն սկսում է կենդանության նշաններ ցույց տալ, հենց վոր բանվորական կազմակերպությունները մասսայական գործադուրների (Ավտորիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում) կամ զինված ավատամբության ձանապարհով (Գերմանիայում) կովի յեն բոնվում կապիտալի հետ, Ամստերդամի Ինտերնացիոնալը մեծ ուժով և յեղանդ և ցուցահանում: Իրեն բռնը ու ական իրավայի հավատարիմ չուն, նա գործ է զնում իր բոլոր ձիգն ու ջանքը բանվորների առաջնադաշտումը կոտրելու, գործադուլսերը տապալելու համար և ոգնում է բռնը ու ազգային զինված ապստամբությունները ննշելու և ջարդելու համար: Մի խոսքով, նոր ինտերնացիոնալը կապիտալիզմի համար հանդիսանում է իրեն իրու և հնագանի մի գործիք և հզոր հենարան :

**ԱՐՀԵԱՐԺՄԱՆ ՀԵՂԱՓՈՒ-
ԽԱԿԱՆ ՈՒՅՑՔԵՐԻ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒՄԸ:** ԱՐՀՄԻ-
ՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶ-
ԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒԹՅԴ :

(ՄԻՋԱՐՀՄԽՈՐՀՈՒԹՅԴ)

Բայց սոցիալիստ համաձայնականների քայլքայիշ աշխատանքի հետ միաժամանակ պատերազմի բռնը անում եր մասսաների հեղափոխական խմուրումը, կովկում եր արհշարժման անհաջողությունը, հաշտելի հեղափոխական փոքրամասնությունը: 1915 թ. սեպտեմբերին,

շեյյարական փոքրիկ Ցիմմերվալդ քաղաքում, Բերնի մոտ, և հետո, 1916 թ. ապրիլին, Կինտալ գյուղում տեղի ունեցան յերկու միջազգային սոցիալիստական կոնֆերանսներ, վորաեզ միացան յեվրոպական 12 յերկրների սոցիալիստական կուսակցությունների հեղափոխական փոքրամասնությունները (Խուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Բոլգարիայի, Խուալիայի և այլն): Յերկու կոնֆերանսների պատճամակորներից շատերը դեռևս տատանվում եյին, չեյին վստահանում ամբողջովին կարգել Յերկրորդ Ինտերնացիոնալը և ստեղծել Յերրորդ, իսկապես հեղափոխական, Ինտերնացիոնալ: Առկայն, բայլշենիկական խմբակի վճռական հնչումը (վերջինիս գլուխ կանգնած եր ընկ. լենինը) խոչոր հետեւ պահպաներ տվեց: Ցիմմերվալդի կոնֆերենցիան բոլոր յերկրների բանվորներին ուղղած իր կոչի մեջ մատնանշում է, վոր «հայրենի-

Քի պաշտոպանություն» լոգունկը — կապիտալիստական խարեւյություն և և ամոթով և դրոշմում այն բոլոր յերկրների համաձայնողականներին, վորոնք ոգնում են իրենց բուրժուազիային և դավաճանում բանվոր գասակարգին։ Կինտալի Կոնֆերանս ավելի հեռու յի գնում։ Նա հայտնում է, վոր բուրժուազիայի սարքած միջազգային սպանդանոցին կարելի յէ վերջ տալ միայն մի ճանապարհով՝ պրոլետարիատի զինված ապստամբության, հեղափոխական պայքարի միջոցով։ Խմբերի ավատական պատերազմը և վերածել քաղաքացիական պատերազմի։ «Վոչ թե հաշտություն առանց աննեկտամիական, արձիքավոր սրճի կողմէներին, խաղաղություն պրոլետարիատին և աշխատավորներին, պատերազմ պարաներին, պատերազմ՝ բուրժուազիային» (Վ. Ի. Լենին, վետրը վար 1916թ.)։ Այդ յերկու կոնֆերանսների աշխատանքներին մասնակցեցին նաև արհմիությունների հեղափոխական փոքրամասնությունները (Ֆրանսիայի հեղափոխական միությունները՝ մետաղագործները, տակառագործները, ինչպես նաև իտալիայի Աշխատանքի Բնդհանուր Կոնֆերացիան)։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, ուռուսական հզոր հեղափոխական արհմարտման արագ աճումը ուռուսական բանվոր գասակարգի առաջ գնում են մի խնդիր՝ փորձել կապ հաստատելու Արեմուտքի արհմիությունների հետ և նրանց հետ միասին պայքարելու կատիտալիզմի դիմ։ Սակայն Հ.Ա.Մ.Կ.թ.-ի (Համամիութենական Արհմաստական Միությունների Կենտրոնական Խորհուրդ) բարձրաթիվ փորձերը կապ հաստատելու գեղին Ամստերդամի հետ, անհաջողության հանդիպեցին։ Բուրժուազիայի և համատարիմ սպասավոր գեղին արհմիությունների Ամստերդամի ինտերնացիոնալը չուղեց գործ ունենալ «Մոսկվայի բայլշենիկների» հետ, վորոնք անպատկառորեն «համարձակվեցին» ձեռք բարձրացնել կապիտալիստական իրավակարգի հիմունքների վրա։ Մհեշ այդ Արեմուտքի արհմիություններում աճում ելին հեղափոխական այլքերը և նրանց բաժան-բաժան, ցաք ու ցրիվ աշխատանքը մի ընդհանուր հաստատուն, ամուր զեկավարությամբ ձուլելու անհրաժեշտությունն ավելի ակներե եր գառնում։ 1919 թ. սկիզբն ետևում Յ-րդ Կոմունիստական ինտերնացիոնալը, վորը միանգամցից իրեն նպատակ է դում նվաճել արհմաստական միությունները, համաձայնականների ազգեցության տակից դուրս կորդել լունվորական լայն մասսաներին և տանել նրանց վճռական մարտի

կապիտալի դեմ, հանուն կոմունիզմի: Յերբորդ կոմիսարնի ազգացության տակ հերթական և գտնում այն հարցը, թէ՝ անհրաժեշտ է համախմբել, միացնել այն ամենը, ինչ վոր միջազգային արհարժման մեջ ձախ է, հեղափոխական: Այս գործում նախաձեռնող հանդիսանում էն ոռւսական կարմիր արհմիությունները, վորոնք իրենց համառուսական յերրորդ համագումարում վորոշեցին մտնել կոմիսարնի մեջ:

1920 թ. կոսկին, Մուկվայում տեղի ունեցող կոմիսարնի 2-րդ կոնգրեսում, նախական խորհրդակցությունից հետո (15 հունիսի) հաջողվեց (15 հունիսի) համաձայնություն կայացնել ոռւսական արհմիությունների, իտալական Աշխատանքի ֆեդերացիայի, իսպանական, հարավ-սլավական, բոլտարական արհմիությունների և Ֆրանսիայի հեղափոխական սինդիկալիստների փոքրամասնության միջև: Ստեղծվեց հեղափոխական միությունների առաջին միջազգային միավորումը «Միջարհմխորհուրդը» (Մեջօք պրօք) -ավելի ճիշճ՝ առայժմս գեռ հեղափոխական արհմաքանական միջազգային սինդիկալիստների միասնական կենտրոն: «Միջարհմխորհուրդը» -«Արհեստակցական և արտադրական միությունների Միջազգային խորհուրդը», -հունիսի 15-ին իր դելարացիայում հայտնում է, վոր «բուրժուական աշխարհին մենք վոչ թե խաղաղություն, այլ սուր ենք թերում», վոր պրուլետարիատի փրկությունը միայն բացառապես բուրժուալիստի դեմ անհաշտելի, դաժան պայքար մզելու, նրա իշխանությանը բռնի կերպով տապալելու և պրոլետարիատի դիկտատորիա հաստատելու մեջ է:

Չնայած, վոր գեղին Ամստերդամը կատաղի հարածանք և սկսել Միջարհմխորհի դեմ, վերջինս վստահորեն շարունակում է իր աշխատանքը: Իսկ աշխատանքն այնքան ել հեշտ չեր: Մանավանդ, վոր Միջարհմխորհի շարքերում չկար կատարյալ համաձայնություն, անարխիստները, նույնպես և «ձախ համաձայնականները» (իտալիայի Աշխատանքի Ընդհանուր Կոնֆերացիան), վորոնք սկզբում շտապեցին «գեղեցիկ հեղափոխական ժեստ» անելու և մտնելու Միջարհմխորհի մեջ, շատ չուտով նրանք սկսեցին ուղիներ վորոնել փախչելու պրոլետարիատի դիկտատուրայի վտանգավոր լոգունդից դեպի «բուրժուական որինականության» խաղաղ թագավորությունը: Յեվ միայն կոմունիստներն ու հեղափոխական սինդիկալիստները, չնայած նրանց մեջ յեղած մի

քանի տարածայնություններին, շաբանակում հյին իրենց ընդհանուր աշխատանքը :

Նրանց ջանքերը հաջողությամբ պատճեցին. Հեղափոխական արհմիությունների առաջին հիմնադիր կոնգրեսում, Մոռկվայում (1921 թ. 3—19 հուլիսի) 14 յերկրների 380 պատգամավորները ներկայացնում եյին ավելի, քան 16,000,000 բանվորներ, այսինքն ամբողջ յերկրագնդի արհեստուակցականորեն կազմակերպված բանվորների մեկ յերրորդից ավելին: Կոնգրեսն հիմնում է միջազգային հեղափոխական արհարժման կենտրոն՝ Արհմիությունների կարմիր ինտերնացիոնալ (Պրոֆինտերն), սահմանում է բուրժուազիայի և Ամստերդամի հետ կովելու հեղանակները, սերտ կապ և հաստատում կոմինտերնի հետ, ընդունում և նաև Պրոֆինտերնի կանոնադրությունը: Այդ կանոնադրության ստեն մի կետը մի մեխ և վոր խփում է միջազգային ռեֆորմիզմի գագաղին և հեղափոխական բանվորների համար՝ դրչակ: Նա ասում է.

«Արհմիությունների կարմիր ինտերնացիոնալի անդամ կարող է լինել սմեն մի հեղափոխական-դաստուակարգային տնտեսական կազմակերպություն, վորն ընդունում է հետեւյալ պայմանները:—

1. Ընդունել հեղափոխական-դաստուակային պայքարի սկզբանական բարձրացնելու պայմանը:

2. Կապիտալի և բուրժուական պետությունների դեմ ամենորդյա պայքարում այդ սկզբունքները կիրառել կյանքում:

3. Ընդունել սոցիալական հեղափոխության նանապարհով կապիտալիզմի տապալման և անցողական շրջանի համար պրոլետարիատի դիկուասուրա հաստատելու անհրաժեշտությունը:

4. Ընդունել և յենք-արկվել միջազգային պրոլետարական դիսցիլինային:

5. Ընդունել և կիրառել կյանքում Արհմիությունների կարմիր ինտերնացիոնալի հիմնադիր կոնգրեսի վրոշումները:

6. Անշատվել Ամստերդամի դեղին ինտերնացիոնալից:

7. Ընդունել և կիրառել բուրժուազիայի դեմ ուղղված բոլոր աշտպանողական և հարձակողական գործողությունների միասնությունը իր յերկրի կոմիուսակցության և բոլոր հեղափոխական կազմակերպությունների հետ միասին:

Այս պարզ և անհաշտ կանոնադրությունը Պրոֆինտերնից վառեց բոլոր մինչեւ այդ ժամանակ տատանվող կազմակերպություններին. և՝ անարխիստներին, վորոնք խոսքով «սարսափելի» հե-

զափոխականեր են և կործով՝ ամենասովորական համաձայնականներ, և՝ իտալական Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան, վոր ամենայն հարժարությամբ նստել եր զույգ աթոռների վրա (վոր մաել եր Միջարհմասորհրդի մեջ, բայց իր կապը Ամստերդամից չէր կորել): Կանոնադրությունը մաքրելով Պրոֆինանսի շարքերը ուսար կազմակերպություններից, ավելի սերտորեն ձևակեց այն բոլորը, ինչ վոր իսկապես հեղափոխական և համաշխարհային արշարժման մեջ, յերիտասարդ կարմիր ինտերնացիոնալի գրոշակի տակ՝ կոմունիզմի գրոշի տակ:

ԿԱՊԻՏԱԼԻ ԱԹԱԶԽԱՂԱԼ-Համաշխարհային պատերազմն ար-
ՑՈՒՄԸ: ԱՄՍՏԵՐԴԱՄԻ մատապես քայլքայեց Յելլրուպայի ժո-
ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ: զովքական տնտեսությունը: Արդեն
1920 թ. վերջին սկզբեց մի չտեսնված արդյունարերական ճգնա-
ժամ, վորն ընդգրկեց նույնիսկ Ամերիկան: 1921 թ. ճգնաժամը
հասավ ամենասուր աստիճանին: Գործարանների վառարանները
հանդչում են, խիստ կերպով ընկնում և ածուխի արդյունա-
նումը, չուզուն (թուջի), պողպատ հալելլ, կանգ են առնում մո-
նածագործական և մանածային գաղղրահները: Իսկ յերբ գործա-
րանները կանգնած են, չեն աշխատում, յերբ ճենարկություն-
ների գարպասների առաջ խոնդում են գործազուրկների միւլիանա-
նոց բանակները, այն ժամանակ, ի հարկե, բուրժուազիայի հա-
մար անհամեմտա ավելի հեշտ և բանվոր դասակարգի հետ պայ-
քարելլ՝ սովոր վոսկրոտ ճեռքը նրա մշտական և համատարիմ
դաշնակիցն ե: Յեվ իսկապես, ուշարերվելով հեղափոխական բան-
գորական շարժման թափի առաջ, բուլոր յերկրների ճեռնարկուներն
սկսում են ծրագրված, պլանաշափ, ավելի ու ավելի ուժեղացող
պրոհը բանվորական կազմակերպությունների դեմ:

Սկսվում ե կապիտալի առաջնադացումը: Զանազան պատրա-
վակներով ութ ժամյա բանվորական որը փաստարեն վերացվում
է⁹), խիստ կերպով նվազում և աշխատավարձը (այսքան, վոր
1921 թ. միայն Անգլիայում 7 միւլիոն բանվորներ շաբաթական
կորցնում եյին 50 միւլիոն վոսկի սուրբու աշխատավարձ): Կապի-
տալն, այդպիսով, ձգտում է հժանացնել իր ապրանքները, ավե-
լացնել նրանց վաճառքը և բանվորների հաշվին՝ չոր դուր դաւ-
արդյունարերական ճգնաժամի տեղմից: Սակայն, բանվոր դաս-

⁸⁾ Տես պրակ 10-րդ

կարգը առանց կովի անձնատուր չի լինում։ Կասպիատալիսաների գրգոիչ, մարտահրավերի բնույթի կրող վարժունքը, աշխատավաճակների կրծատումը, որ-ավուր աճող թանկության պայմաններում, բանվորական որվա յերկարելն—այս բոլորն իրեն պատասխան, առաջ և բերում բանվորական գործադույների ալիք։ Հեղափոխական փոթորիկն առանձին յերկրներում (Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում) հասնում է մի այնպիսի ույժի, վոր յերեմն սկսում է լրջորեն սպառնալ կապիտալիստական իրավակարգի հիմունքներին։ Մական վախեցած և մասամբ ել չփոթված, մոլորդական բուրժուազիային այս անգամ ել սպնության և հասնում Արհմիությունների գեղին Ամստերդամի Խնտերնացիոնալը։ Հեղափոխական ալիքի վերելքի ամենավճռական մոմենտին նա դաշտին և մխում բանվոր գասակարգի մեջքը։

Ամստերդամի դաշտանություններն անթիվ են։ Նա քանդում և Փրանսիայի ընդհանուր գործադուլը (1920 թ.), Հոլանդիայի գործադուլը, Չեխո-Սլովակիայի լեռնագործների գործադուլը, ճնշվում և հեղափոխական բռնկումը Գերմանիայում (1921 թ.) և այլն։ Միաժամանակ Ամստերդամի աղքերացու Աշխատանքի Ամերիկայի Ֆեդերացիան, կապիտալիստաներին մատնեց ամերիկական մետաղագործ, լինսապործ և յերկաթուլազին բանվորներին, քանդելով ու խանգարելով գործադուլային շարժումն արգյունաբերության այդ հյուզերում 1919-1921 թ.։ Բայց Ամստերդամի դաշտանությունն առանձնապես ծանր հարված հասցըրեց Ագրիայի և Իտալիայի բանվորական շարժմանը։

«ԵԵՎ. ՈՒՐԲԱԹ»։ Անգլիական կառավարությունը պատեղադրմի ժամանակ՝ յաջունուելով արագի հակոգություն սահմանաց բոլոր ածխահանքերի և հանքաօրանների (Պախտե) վարչության վրա։ Լեռնագործ բանվորների աշխատանքի պայմանները կառավարությունն եր սահմանում։ Անգլիական բուրժուազիան նման զիջումներին պիտի ընդառաջներ, վորովեսպի ժամանակալորապես հաղաղացներ, խաղաղացներ բանվորական շարժումը, հասներ աշխատանքի բարձր արտագրողականության և ուագմական արգյունաբերության համար վասելիք ապահովեր։ Բայց պատերազմին ավարտելուց հետո ածուխի արգյունաբերողներն սկսեցին պատրաստվել ճակատելու բանվոր գասակարգի հետ։ Կառավարությունը նրանց ընդառաջ գնալով, 1921 թ. մարտի 31-ին, այսինքն սահմանված ժամկետից 5 ամիս առաջ բոլոր հանքարան-

ների վրայից վերացրեց հսկողությունը և այդպիսով՝ քանզեց կապիտալիստների ձեռքի կապանքները:

Հանքանբաների տերերն անմիջապես ածխահատների միությանն ուղղիմառում ներկայացրեցին, առաջարկեցին ընդունել աշխատանքի նոր, ավելի գատթար պայմաններ, չնդռնելու դեպքում սպառնացին 1921 թ. ապրիլի 1-ին փակել բոլոր հանքասրահները և բանվարներին փողոց չպատել: Ածխահատները մարտահրավերն ընդունեցին, և սկսվեց Անդլիայի պատմության մեջ չըտեսնալած, լեռնազործ բանվորների մի ընդհանուր գործադրության «մեկը գաշտում ուղղմիկ չե»: Ածխահատների Փեղերացիան զգալով, վոր իր ույժերը բավական չեն միացած հակառակորդին հաղթահարելու համար, դիմեց «Յերբյակ Միությանը» (ածխահատների, յերկաթուղայինների և փոխադրողների միավորմանը, —տես գլուխ չորսորդ կամ՝ «կազմակերպչական հարցերին արհշարժման մեջ» պրակը), յերկաթուղայինների և փոխադրողների առաջնորդության մեջ՝ պարագաներին և ովանության ինդրեց: Բանվարական լայն մասսաների ճնշման տակ Յերբյակ Միության դեղին առաջնորդներն ստիպված եյին զիջելու և նույնիսկ նշանակեցին վորոշ ժամկետ՝ ապրիլի 12-ը, յերբ նրանց հոր կազմակերպությունները գործադրության մեջ միավորման անշափ բարձրացագ: Անդլիայի զեկավար գասակարգը ընկան պանիկայի մեջ: Բայց հենց այսաեղ վրա հասավ հոչակավոր «Սև ուրբաթը»: ընդհանուր գործադրության դեղին առաջնորդներն հետաձգեցին 3 որով և փոխադրեցին ապրիլի 15-ին, իսկ հետո, մի դատարկ պատրվակով գործադրությունները բերացվեց:

Ածխահատներն իրենց հերոսական օրայքարի մեջ մնանակ մնացին: Անդլիայի ամբողջ բանվոր գասակարգը բոնկվեց բարկությամբ և հուզմունքով: Յերկաթուղայինների և փոխադրողների տեղական բաժանմունքներից չատերն իրենց զիմուու գործադրության առաջարարեցին: Ածխահատների Փեղերացիան զիմացավ ելի ամբողջ 13 շաբաթ, բայց վերջի վերջու գործադրության վերջացագ ածխահատների մասնակի պարտություններով և ամբողջ անդլիական արհշարժման հսկայական պարտությամբ, ջարդով, յերբեմնի հընչակավոր «Յերբյակ Միությունից» միաց միայն անփառութակ մի հիշողություն:

ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՆՎՈՐ-

ՄԵՏԱԼԱԳՈՐԾՆԵՐԻ

ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԻ

(1920 թ.)

Արդյունաբերական գաժան ճշգ-

նաժամից և թանկության աճումից

գերծ չմնաց նաև իտալիան։ 1920 թ.

Հունիսի 18-ին «Իտալիայի մետաղա-

գործ-բանվորների հզոր ֆեդերացիան», վորոն ընդգրկում եր 500,000 բանվորներից 9/10-րդը, պահանջեց աշխատավաքածի 35% հավելում։ Իտալական կապիտալիստները, վորոնք իր ժամանակին խիստ չարացել ելին իրենց կատարած զիջումներից, վոր իր ժամանակին ստիպված ելին անելու (8 ժամյա բանվորակա որ, դործարկումների կազմակերպումն), վճռեցին ոգովել հանգամանաքից և մահացու հարգած հասցնել «Մետաղագործների ֆեդերացիային»։ Մի քանի շաբաթվա բանակցություններից և դործադուներից հետո, ձեռնարկումները հայտարարեցին լոկաուտ։ Բայց այս անդամ արգեն կառավարող չըջանների համար տեղի ունեցավ ինչ վոր բոլորովին անսպասելի մի բան։

«Ենանդուն մետաղագործները նրանցից առաջ ընկան։ Նրանք արագորեն սկսեցին գրավել մի ձեռնարկություն մյուսի հետեւից։ Վերջապես, նրանք գրավեցին յերկրի բոլոր պողպատաճութական, ժեքնագործական և յերկաթուղային դործարանները։ Դործարանների շենքերում նրանք պնդացիրներ դրեցին, կարմիր գրոշակ բարձրացրին և պատրաստեցին ինքնապաշտպանության։ Այսպիսով 500,000 բանվոր մետաղագործները աշկարա ապստամբվեցին իրենց տերերի դեմ։ Այս բոլոր զեպքերը իտալիան նետեցին խոր հեղափոխական ճգնաժամի մեջ։ Ամենուրեք բանվորներն հավաքվում ելին մարտական գողկորությամբ, նրանց ուժն ամրանում եր։ Արդյունաբերական բանվորներն իրենց ձեռքն ելին առնում ձեռնարկություններն արտադրության համարյա բոլոր ճյուղերում։ Գյուղացիները ձեռնարկեցին հողերի կոնֆիսկացիային (խլելուն)։ Կառավարող չըջանները գլխները կորցրել ելին... կառավարությունն անզոր եր, զորքն ամեն մի բոպե կարող եր անցել բանվորների կողմք։ Իտալական հարյուրավոր քաղաքային խորհուրդների (քաղաքային խորհուրդների) շենքերի և հաղարավոր դործարանների ու զավողների վրա ծածանվում եր կարմիր գրոշակը։ Վորոշակի կերպով իտալիան գտնվում եր աղջապական հեղափոխական ալիքները Գերմանիայում, Անդիայում, իտալիայում և Ֆրանսիայում 1918-1921 թ. թ.»)

Տարբերայնորեն ծավալված դեպքերից վախեցած, արհմիունից անսերի դեղին առաջնորդները նահանջի նշան ազին: Աչխատանքի ընդհանուր կոնֆերացիայի Գործադիր Կոմիտեյի պրենումն, իսկ Հետո յել մետաղագործների համագումարը, ընդունեցին, վոր գործադուն անհրաժեշտ և գաղաքեցնել, և Իտալիայի սոցիալական հեղափոխությունը ծախեցին վոստի ազուրով—աշխատավարձի գրոշանոց հավելումի համար: Սեպտեմբերի 24-ին իտալական պրակտարիատի հերսոնական պայքարը խափանված եր:

Մահացու վախեց ուշքի գարուց հետո կապիտալիստները մրանեցին դաժան կերպով վրեժ առնել իրենց ապստամբած սորուկներից: Այդ նպատակի համար նրանք հրաշալի կերպով ոգաագործեցին Փաշիստների կազմակերպությունը, և սպիտակ տերրորի ալիքը տարածվեց ամբողջ յերկրում: Ասցիալիստական կազմակերպություններն ու արհմիությունները յենթարկեցին կործանման: Հեղափոխականները ծեծվամ և զնակահանրվում ելին, իսկ Իտալիայի բանվոր դաստակարգը, Հիասթափությունից և Հունահանությունից ճնշված, այլևս անզոր եր իր շարքերը նորից միաձույերու և դիմագրություն ցույց տալու: Դեղին առաջնորդների գավաճանությունը ճանապարհ հարթեց աշկարա արյունու գիտառաւուրայի՝ բուրժուական Փաշիզմի համար: Ասցիալ-համաձայնականների յերկրորդ գավաճանությունից և յերկաթուղարքինների, կառուցողների և մետաղագործների նոր գործադունչները քանդելուց հետո (Ճանապարհ վերջինների ապստամբությունը Լիւորնոյում և Պյեմոնտում, վարը քանդվեց չնորհիլ Աշխ: Բնդհ: Կոնֆերացիայի հրամանի՝ 1922 թ. Հունիսի 10-ին), և վոր գլխավորն և, Աշխ: Բնդհ: Կոնֆերացիայի գեղին առաջնորդների կողմից 1922 թ. պաստոսի Յ-ին Հենց իրենց հայտարարություն հանուր գործադունքն իտալիայում քանդելուց հետո՝ Փաշիզմը սերջնականապես հաղթանակում և և կանգնում իշխանության զլուխ:

ԿԱՊԻՑԱԼԻ ԱՌԱՋԻԱՂԱ- Արհմիությունների յերիտասարդ ՑՈՒՄՆ ՈՒ ՊՐՈՖԻԵՏԵՐՆԵՐ Կարմիր ինտերնացիոնալը գեռ և ին ինչպես պետքն և ամրացած և կոփկած չեր այնուամենայնիվ նա Արեմուտքի յերկրների իր յեղայրական կոմաւնիստական կուռուկցությունների հետ միասին անձնադոհ կերպով հեղափոխա-

կան պայքար եր մզում բուրժուազիայի և նրա արքանցակ՝ սոցիալ-համաձայնականների գեմ:

Առաջ խաղացակ կապիտալի գեմ մզգով բոլոր ճակատամարտերում կոմունիստներն ու նրանց զեկավարած հեղափոխական բանվարները միշտ եւ ընթացել են բանվար դաւանաբացի առաջին շաբթերում: Անկուն կերպով հետեւելով լենինի պատկանիներին, թե «վորոնեղ կա չորս բանվոր, այնտեղ հինգերորդն անպայման բայց եկի և լինելու», Արհմիությունների Կարմիր ինտերնացիոնալը եր բոլոր ուժերով աշխատել և դեղին արիստոքրատները բաժանաժան չանել, այլ նրանց նվանել ներքուստ: Յեկ Անդրեյայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների միություններում հեղափոխական փոքրամասնության առարձն հերոսական աշխատանքն ուստից հաղորդներով դուրս կորցել մասսաներին նրանց գեղին առաջնորդների ազգեցության առաջից: Պարտությունների զառն փորձից սովորած մասսաներն ավելի ու ավելի յեն յերես դարձնում դափանան-առաջնորդներից: Կոմունիստների ազգեցությունն արհմիություններում արագործն ուստից անձի: Պրոֆինտերնը համարյա ամբողջովին նվաճում և չեխոս-առավական, պորտուգալական, նորվեգիական միությունները: Նա խոշոր հաջողություններ և ձեռք բերում նաև ուրիշ յերկրներում:

«Միասնական հակասություն» (այսինքն՝ Պրոֆինտերնի ձգումը համաձայնական-առաջնորդների գլուխ վրայով սահմանելու հեղափոխական բանվարների միասնական ճակատը գեղին միությունների բարձամիլիոն մասսայի հետ) գործերակերպը, Ամստերդամցիների կողմից շատ հասկանալի պատճեններով, հանդիպեց կատաղի դիմադրության: Ի՞նչ եր առաջարկում Պրոֆինտերնը գեղին արհմիությունների բանվորներին և նա առում էր:

— Ինկերներ, զուք միացած եք այսպիսի միություններում, զորոնք գետ ևս չեն ընդունուի պարզաբանի դիկտատուրայի և խորհուրդների իշխանության առաջնորդելությունը: Մեղադր են ձեր զավաճան-առաջնորդները թուլութ հսկ են տանում վոչ ին այն մասին, վոր դուք բուրժուազիայի վրա հաղթանակ տանեք այլ մտածում են կապիտալիստական իրավակարդի պահպանման մասին: Երանք ձեղ զավաճանեցին, դարձան կապիտալիստների պահպանականը (լակեյներ): Ձեր առաջնորդները բաժանում են ջլաստում բանվոր դասակարգը, նրանք հայտարարում են, վոր «ամըստերդամյան արհմիությունների և բայլշենիկական միություն-

ների միջև ընդհանուր վոչինչ չկա»։ Առա և, ընկերներ։ Ճիշտն այն է, վոր ձեր առաջնորդները բանվոր դասակարգի հետ ընդհանուր վոչինչ չունեն, բայց բոլոր յերկրների բանվորները միշտ եւ մի հիմնական բնդհանուր գործ ունեն, այն եւ տաղալել բուրժուազիայի արբապետությունը, փշել կապիտալիստական սոցբրեության կապանքները և կոմունիզմի թագավորությունը կառուցել։ Ինչքան եւ վոր մենք վիճելիս լինենք այն բանի մասին, թե ինչպես պետք է զարգանա բանվորական շարժումը, մենք առաջարկում ենք ձեզ, միաձույլ շարքերով, միամինական բանվորական նակասով կապիտալիզմին հասցնել ջախջախիչ հարված և կոորդել նրա հորությունը։ Սակայն այդ միամական ճակատին ձեր զեղին առաջնորդներին յննթարկելու, վորոնք այնքան սիրում են վայնասուն բարձրացնել, իրենց մեղքն ուրիշի գլխին դցել, թե այդ իրենք չեն, այլ Արհմիությունների Կարմիր ինտերնացիոնալն եւ, վոր բաժան-բաժան և անում, ջատում և բանվորներին և այդ վայնասունով ուզում են ծածկել բանվոր դասակարգի բնդհանուր գործի հանդեպ կառարած իրենց ստոր, զարպելի դաշտահությունը։

«Միամական ճակատի» դործելակերպն ընդունելը Ամստերդամի համար կը նշանակեր հետանալ բուրժուազիայի հետ աշխատակցելուց և կովել նրա զեմ, իսկ այդ բանին զեղին առաջնորդները բոլորովին աննդունակ ելին։ Իսկ «միամական ճակատից» եւ Հրաժարվելով, նրանք իրենց զիխովին մատնած կը լինելին։ Նրանք զրանով պարզուրոց կերպով կապացուցելին բանվոր դասակարգին, վոր իրենց տարսուկ տեղերը պահպանելու, բուրժուազիայի բարեհանդությունից չզրկվելու համար նրանք պատրաստ են պատռուտելու բանվոր դասակարգի կենդանի մարմինը և կապիտալիստաներին հնարավորության տալու բանվորներին ջլոտված, միայնակ ջարդելու։

Արհմիութենական բյուրոկրատիան դերակառեց յերկրորդը։ Յեզ վորքան Պրոֆինանսերնն ավելի լայնութեն եր ծավալում «միամական ճակատ» դործելակերպը, վորքան ավելի ելին ամբանում զեղին արհմիությունների ներսում կամունիստական խմբակները, վորքան ավելի յեր աճում նրա ազգեցությունը մասսաների վրա, Ամսաներգամցիներն այնքան ավելի կատարուեն ելին կովում կոռմունիստների զեմ։ բազական եր, վոր հեղափոխական բանվորներն իրենց հայտարարեցին Պրոֆինանսերնի կողմնակիցներ, նրանց իս-

Ալույն և յեթ դուրս և յին նետաւմ դեղին միություններից ; բավա-
ձան եր , զոր համաձայնողական միության մի վորեւ տեղական
մարմնի վարչության մեջ կոմունիստները մեծամասնություն
ստանալին , այդ վարչությունն անմիջապես ցրվում եր : Գերմա-
նիայում կոմունիստների նվաճած գործարկուների դեմ ամստեր-
դամցիներն իսկական հալածանք սկսեցին : Հոկայական դժվարու-
թյունով Պրոֆինտերնին հաջողվեց իր կողմանակիցներին հետ պա-
հել գեղին արհմիություններից զուրս զայլուց , սարգել նրանց , ինչ
էլ զոր լինի , շարունակել հեղափոխական պրոպագանդան հենց
բանվորական լոյն մասսաների ծոցում : «Միասնական ճակատի»
գործերակերպը հոկայական ոգում և բերում հեղափոխական շարժ-
ման համար : Եռոյնիսկ ամերիկական ամենահետամմաց միություն-
ներում մասսերի կազմակերպում «Արհեստակցական պրոպագան-
դայի Լիգան» Կարմիր Պրոֆինտերնի համար հարյուր հազարավոր
կողմնակիցներ և գրախում : Յերբ Պրոֆինտերնի կողմնակիցների
այդ հեղափոխական պայքարը վերջանում էր հազվանակություն և , վեր-
ջապես , յերկրի արհմիություններում մեծամասնությունը նրանց
կողմն եր անցնում , Ամստերդամի գավաճանները կանգ չեյին առ-
նում նույնիսկ անջատման տուղ , մեայն թե հնարավորություն ու-
նենան շարունակելու կոիվը իրենց տուիլի կոմունիստների դեմ :
Այսպես որինակ , չնայած Պրոֆինտերնի անյերեակայելի ջանքերին ,
ամստերդամցիներն այնուամենայնիվ կայուղացան անշատել Ֆրան-
սիայի արիեստակցական շարժումը : 1921 թ . դեկտեմբերին Ֆրան-
սիայում կազմվեց արշարժման յերկու կենտրոն , հեղափոխական
մեծամասնությունը—«Աշխատանքի Ռևոլուտիվ Կոնֆեդերացիան վոր-
քնդգրկում է 350,000 մարդ և համաձայնողական վորքամասնու-
թյունը—«Աշխատանքի Բնդհանուր Կոնֆեդերացիան»—250,000 ան-
դամով : Բարսր յերկրների վաստիկանություններն ու ժանդարմե-
րիան յեռանգով ոգում ևն Ամստերդամցիներին , թույլ չուրով
Պրոֆինտերնին ներկայացուցիչներին մասնակցելու արհմիություն-
ների միջազգային համագումարներին և այլն : Մի խոսքով , փոխա-
նուկ կազմելու միասնական հակառ բուրդուազիայի դեմ կովելու
համար , Ամստերդամցիների աշկարա կերպով կազմել և միասնական հա-
կառ բուրդուազիայի հետ կոմունիզմի դեմ կովելու համար , այ-
սինքն բանվոր գասակարգի դեմ կովելու համար :

Կազմականի հարվածների տակ , ինչպես նաև չնորհիվ լիրենց գե-
ղին գավաճան-առաջնորդներից հիասթափվելուն , բանվորական

մասսաները տարերայնորեն հեռանում են արհեստակցական միություններից : Իտալիայում արհմիությունների անդամների թիվը կրծագիշտ է Համարյա չորս անգամ , 1922 թ . համերով 700,000-ի , Ֆրանսիայում 2½ միլիոնից իջել է մինչև 600,000 , Ամերիկայում և Անգլիայում կրծագիշտ է 1 ու կես միլիոնով : Ամստերդամի ուժեղնականության համարյա պակասում էն , իսկ Կարմիր Պրոֆինտերնի ուժեղը՝ անբարձր համարյա աճում :

ԿԱՐՄԻՐ ՊՐՈՓԻՆՏԵՐՆԻ
2-ՐԴԻ ԿՈՆԳՐԵՍԻ

Ահա այսպիսի պայմաններում՝ 1922 թվի նոյեմբեր-գեկտեմբերին գումարվեց կարմիր Պրոֆինտերնի 2-րդ կոնգրեսը : Դա հեղափոխական արհեստակցական շարժման մի ազգու գեմոնստրացիա յիք : 38 յերկրներից հավաքված եյին 213 պատգամագորներ , ներկա յիք 61 կազմակերպություն . չնայած Պրոֆինտերնը քանակով գես քիչ եր Ամստերդամից (Պրոֆինտերնի 12 միլիոն բանդորների գեմ Ամստերդամն ունիր 15 միլիոն) , բայց դրա փոխարեն նա վորակով զերազանցում եր Ամստերդամին : Նա համարվում եր պրոլետարիատի բավարային հեղափոխական կազրեր , վորոնք անբնդհատ մեծանում ելին^{*)} : Հակառակ Ամստերդամի , վորը սահմանափակված է զրիսափորապես

^{*)} Պրոֆինտերնի յերկրորդ կոնգրեսին , վերջինիս բազան (Հենարանը) կազմում եյին սուսական արհմիությունների 5 միլիոն հեղափոխական բանդորները , Փրանսիական «Աշխատանքի Աւնիսար» կոնֆեգերացիայի 350,000 հեղափոխական բանդորները , վորոնք հանդես յեկան Պրոֆինտերնի համակարգով կերպով աշխատակցելու : Գերմանիայի «ազատ» միությունների 2½ միլիոն կոմունիստական ուղղուցիչներն , ինչպես Փիզիքական և մտավոր աշխատանքի գերմանական միությունը , իտալական կոմունիստական Փրակցիան Աշխատանքի կոնֆեգերացիայում և հեղափոխական Փրակցիան «Սինդիկատների Աւնիսար» , Անգլիայում—մետաղագործների և լեռնագործների մի մտար , մի շարք ուրիշ յերկրներում (Նորվեգիայում , Չիխա-Մուլակիայում , Լեհաստանում , Հարավ-Արևմտականում , Իսլանդիայում , Հյուսուսականում , Ամերիկայում , Ավստրիականում , Բոլգարիայում և այլն) Պրոֆինտերնն ունի իր համատառուն հիմնաքարեր :

Յեկըռոպայի չըջանակներով, Պրոֆինտերնը հանդիսանում է ինտերնացիոնալ բառիս բան իմաստով: Հ-ըդ կոնգրեսում ներկայացված ելին աշխարհիս բոլոր մասերը, և՝ Ազգայրիալիան և՝ Հյուսիսային ու Հարավային Ամերիկան, և՝ մի շաբթ ասիսկան յերկրքներ, և՝ Յեղիպտոսուր: Արեմայան իմպերիալիստներից սարկացած Արեւիքը պատերազմի ընթացքում կարողացավ ստեղծել իր սեփական գործարանները և զավագները, ուրեմն և իր սեփական արհեստակցական կազմակերպությունները և Պրոֆինտերնի գեղեավարությամբ կամաց սկսեց իր կրկնակի պայքարը ստարչերկրյու և իր սեփական բուրժուազիայի դեմ:

Յերկրորդ կոնգրեսում հիմնական տեղը բոնեց կազմակերպչական հարցը արհշարժման մեջ: Այսպես որ, յերկրորդ կոնգրեսը հաստատեց, վոր արհմտիությունները պետք ե կառուցել զեմուկրատական ցենտրալիզմի⁹⁾ հիմունքներով և վոչ թե Փեդերալիզմի, վորոշելով, վոր չորհար և չափից ավելի ձգտել «ժիանական միությանը», ինչպես վոր այդ ցանկանում են չեխոսլովակյան ընկերները, վորոնք ստանձնին արաւագրական միությունները վեր ելին ամել հասարակ սեկցիանների՝ միջմիութենական միուրումներին կից: Յերկրորդ կանգնեար վճռականորեն դեմ արտահայտվեց արհմիությունների անջատելուն և կոմունիստներին ու հեղափոխական բոնիորներին առաջարկեց ամեն կերպ կիրառել միասնական ձաւկասի գործելակերպը, անգալար կավել Ամստերդամի զեմ և ամեն կերպ մերկացնել նրան: Իսկ յեթե ամստերդամցինները միություններից կը գտարեն հեղափոխական ոպպոզիցիան, այն ժամանակ հեռացրածներին անհրաժեշտ է կազմակերպել և միացնել մարտական հեղափոխական կազմակերպությունների մեջ: Յերկրորդ կոնգրեսը չետքեց նույն հեղափոխական գործարկունների հոկայական նշանակություններ: Նա առաջարկեց ամեն կերպ ամրացնել զործարկունները և զարձնել նրանց իրրե չիմք և միաժամանակ իրրե չզոր մարտական զործիք հեղափոխական շարժման համար:

Դեռևս առաջին կոնգրեսից հետո Պրոֆինտերնը զանազան արաւագրաթյունների մեջ սակագծեց, այսպես կոչված, «պրոպագանդայի միջազգային կոմիտեներ»: Վորոնք ձգտում ելին միացնելու բոլոր յերկրների հեղափոխական արհմիությունների աշխատանքը:

⁹⁾ Տես պրակ Զ-ըդ (Խաչ և ասում պրոֆմիության կանոնաշրությունը) բրոցութեար:

և միաժամանակ նվաճելու ներքուստ յաւրաքանչյուր համապատասխան դեղին միությունը : Արինակ՝ մետաղաղործների պրոպաղանդայի կոմիտեն աշխատանք եր կատարում բոլոր յերկրների մետաղաղործների մեջ : Բոլոր պրոպաղանդայի միջաղղային կոմիտեն աշխատում էլլին Պրոֆինտերնի անմիջական զեկավարությամբ : Յերկրորդ կոնգրեսը վորոշեց ավելի հեռու գնայ և պրոպաղանդայի և կոմիտեների վայսարեն ստեղծել—Կարմիր Բնաերնացինալիներ ըստ արտադրությունների : Դրա հետ միասին, կոնգրեսն ի հարկե բոլորովին չեր հրաժարվում «միանական ձականիք» համար պայքար մղելուց : Հեղափոխական արհմիություններն առաջդիմ նման պետք և աշխատեն ձգտելու մասնել Ամստերդամի զեկավարած զեղին արտադրական ինտերնացիոնալների մեջ, վորագեղի նրանցից ամեն մեկի ներսում ազատորեն շարունակեն իրենց հեղափոխական աշխատանքը և պրոպաղանդան, նվաճեն նրան և մտաներին դրավեն Պրոֆինտերնի կողմբ :

ՊՐԱՅԻՆՑԵՐՆԵ ՅԵՎ ԿՈ-
ՄԻՆՑԵՐՆԵ .

Պրոֆինտերնի յերկրորդ կոնգրեսի-

առաջ դրված Հարցերից առանձնա-

պես լուրջ բնույթ եր կրում Յ-րդ Կո-

մունիստական Բնաերնացիոնալի հետ ունենալիք մոխիչարքերությունների հարցը : Այլ հարցն ահա, թե ինչու ծագեց : Աշխատանքի Ռւնիստար Կոնֆեդերացիան, Ֆրանսիական հեղափոխական սինդիկալիստաները, վարոնք աղնիքարար, կոմունիստների հետ կողք կող-
քի կավում ելին բուրժուազիայի գեմ, գես ևս իրենցից չելին կարո-
ղացել թոթափել Ֆրանսիական արհշարժման հին նախադատչոր-
մունիքները, վահենում ելին քաղաքական կուսակցության չափից
ավելի ազգեցությունից : Նրանք հայտարարեցին, թե՝

— կոմիտենը մեզ կոչ և անում զինված տօնամբության խորհուրդների իշխանության և պրուենսարիստի զիկատառությի համար կովկերու : Մենք, ընդհանրապես, նրա հետ համաձայն ենք և այլ պայքարը մենք կը մղենք Ֆրանսիական կոմունիստական կու-
սակցության հետ միասին և պրոֆինտերնի զեկավարությամբ : Բայց մենք համաձայն չենք Պրոֆինտերնի կանոնադրության §11-ի հետ, վարուել ասված և, թե Պրոֆինտերնի ներկայացուցիչը մահում է կոմիտենի բյուրոյի կազմի մեջ և ընդհակառակը : Մենք վա-
սենում ենք, վար չենց այլ ներկայացուցչության ոգնությամբ

Կոմինստերնը մեր ձեռքերը կը կատի, մեզ վրա ճնշում կը գործադրի:

Այդ թերահամբառությունը Փրանսիական հեղափոխական սինդիկալիստաների մոտ մնացել և գեռես նախապատերազմյան շրջանից, յերբ նրանք հրաժարվում եյին յենթարկիւլու իրենց համաձայնողական սոցիալիստական կուսակցությունների զեկավարությանը: Բայց ի հարկե, պրոլետարիատի խոկական ավանդարդի և առաջնորդի, կոմունիստական կուսակցության վերարկությանը՝ նրան թերահամբառությունը չի կարող և չորհաք և լինի: Ի՞նչ է այրարիսություններ կարող են ունենալ կոմինստերնը ու Պրոֆինստերնը: Կոմինստերնը ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցությունների միավորումն և գա վլխամբոր շտարն և, վար իր հզոր ձեռքով առզգություն և տալիս և ամբողջ աշխարհի աշխատավորների շահնակները կապիտալի գեմ պայքարի յի նետում: Արհեստակցական միությունները ըստանք փոխանցող մեխանիզմ են՝ կուսակցությունների գեղի մասսաները, դրանք գործարնային պրոյեկտարիտոտի կազմակերպված և սերտորեն ձուլված շերտերն են, վորոնց միջոցով բանվոր գասակարդի կուսակցություններ դեկամարդում և տշխատավորների մնացյալ ամբողջ բազմություններ մասսան (կառացիւթյան): Կը նշանակե Պրոֆինստերնի ամբողջ աշխատանքի միայն այն ժամանակ հաջող կը լինի, յերբ նա ամբողջովին կընթանա Յ-րդ կոմունիստական ինաւերեացիօնալի զեկավարության տակ:

Յերբորդ կոնգրեսն հենց այդպես ել վճռեց: Պրոֆինստերնի և կոմինստերնի անքականելի միությունը բուրժուազիայի գեմ կովելու գործում պետք է պահպանել: Բայ ինչ վերարերում և Փրանսիական ընկերներին չափա, վորովհետեւ Աշխատանքի Ռենիտար կոնցեղերացիան, այսինքն 350,000 հեղափոխականների միացումը խիստ ցանկալի և ողտակար և բանվոր գասակարդի ընդհանուր գործի համար, ուստի և յերկրորդ կոնգրեսոր ձեւականորեն (արտաքուստ) գիշում և անում Փրանսիական բանվորների հեղափոխական մասի սինդիկալիստական տրադիցիաններին և նախապաշտրմունքներին: Պրոֆինստերնի կանոնագրության §11-ը համում և, սակայն բուրժուազիայի դեմ միասին պաշտպանողական և հարձակողական կը-ուիլ մղելու համար ստեղծվում և «Գործողության կոմիտե», վարի կազմի մեջ մտնում են կոմինստերնի և Պրոֆինստերնի ներկայացուցիչները և ձուլում են արդ յերկու կազմակերպությունները:

Այդ պարմաններն Աշխատանքի Ռենիտար կոնֆեղերացիան, ըն-

դունեց և վերջնականապես մտավ արհմիությունների կարմիր խո-
տերնացիոնալի ժեղ :

ՊՐՈՑԵՏԵՏԵՏԵՐՆԵ ՅԵՐԿՐՈՐԴԻ Կապիտալի առաջնազացումն ամե-
նոնդրելիք ՄԻՆՉԵՎ 3-ՐԴ նայն թափով տարվում եր վոչ միայն
ԿՈՆԴՐԵԼ (ՆԱՅԵՄԲԵՐ 1921-1922 թ. այլև 1923 թ.) :
1922 թ.—ՀՈՒԼԻՍ 1924 թ.) Իտալիայում Փաշիստական դիկ-
տատուրա հաստատվելուց հետո, Փա-
շիստական հեղաշրջում և կատարվում, Բորբարիայում, հետո Խո-
օդանիայում նման հեղաշրջման փորձեր են անում, նույնը և Գեր-
մանիայում : Կապիտալի ամենաուրեք առաջ և խաղում աշխատավար-
ձի և 8-ժամյա բանվորական որդու վրա : Այսպես որինակ, Անգլիա-
յում բանվորները 1923 թ. նորից կորցրին 160,000,000 ո. աշխատա-
վորձ, վորը կապիտալիստները նրանցից կարեցին :

Բայց առանձնապես ծանր ու անսանելի յեր գերմանական բան-
վորական գառակարգի գրությունը : Ռուբրի գրավումը Փրանսիացի-
ների կողմից և գերմանական ժողովրդական անսեսության ճգնա-
ժամը առաջ բերեց մարզի սրբիթայ անկումն : «Պասսիվ գիմագրու-
թյան» և Անտանատայի վրա կատարած իր բոլոր ծախսերը գերմանա-
կան բուրժուազիան աշխատում եր զնել գերմանական բանվորնե-
րի վրա : Թանկությունն աճում էր, աշխատավարձը բավականա-
չափ հետ եր մնում նրանից, իսկ 8-ժամյա բանվորական որվա-
նից կամաց կամաց միայն հիշողություն եր մնում : Կոմունիստա-
կան կուսակցության զեկավարությամբ Գերմանիայում սկսվում ե
ուժեղ հեղափոխական խմորումն : Սկսելով թուրում գործադուրա-
յին պայքարով (մայիս 1923 թ.) և հունիսին տարածվելով ամ-
բողջ յերկրում, 1923 թ. անսան այդ շարժումը բարձրանում է
մի անսովոր, կատաղի ալիքով : Պրուետարիատի ուժերի համար
կարմիր Սաքսոնիան գարձափ հետարան և հիմք : Բոցավազում և
բաղարացիական պատերազմը, Գերմանիան իր Հոկտեմբերի նա-
խորյակին եր : Սակայն այս անգամ պրոլետարիատին հաղթանա-
կին համեմ չի հաջակվեց : Գերմանական բանվոր զասակարգի պար-
տությանը բավական շափով նորասուց գերմանական կամունիս-
տական կուսակցության անվճռական, վոչ լրիվ հետեւղական
վարչագիծը : Վերջինս «միասնական ճակատ» ստեղծեց ձախ սո-
ցիալ-գեմոկրատիայի հետ, բայց փոխանակ այդ «միասնակա-
նությունը» սղտակործելու թե կոմունիստական և թե սոցիալ-դե-

ժոկրատական բանվորական մասսաներին զինելու նպատակով, նա դրավված էր պարբռմէնտական խոռակցություններով։ Հեղափոխական գործարկումներին կոմկուսակցությունը շատ թույլ կերպով ոգտագործեց՝ նրանց չուրջը հեղափոխական բանվորական մարտական խմբեր կազմակերպելու համար, այլ «Ճախ» սոցիալ-դեմոկրատներն ամենավճռական բոպեյին նույնքան վարիկոս և դագաձան հանդիսացան, վորքան և աջ սոցիալ-համաձայնական-ները։

Գերմանական հեղափոխությունը ծանր պարագությունն կրեց։ Բանվորների գրոհից ուշքի յեկած կապիտալիստներն անցան կատաղի հակահարձակման, բայց վորում արհմիությունների գեղին տաաջնորդներն ամեն կերպ ողնում ելին բուրժուազիային։ Բանվոր դասակարգին հաղթելու ձգումով տարված, ձեռնարկուները մասսայականորեն փակում են իրենց ձեռնարկությունները, վորի չորչիվ Գերմանիայում 1923 թ. դեկտեմբերին, ամեն մի 100 բանվորին բնկում էր 60-70 գործազուրկ։ Մեջաստագի միջոցով անց ե կացվում մի որենք (վորն անցկացնելուն ամեն կերպ ողնում են սոցիալ-համաձայնականներն ու պրոֆբյուրոկրատները) 8-ժամյա բանվորական որով վերացման և 9-10 և նույնիսկ 12 ժամյա բանվորական որով փոխարինելու մասին։ Միջին հաշվով սահմանվում է 60 ժամյա բանվորական շարաժ, փոխանակ 48 ժամյա լինի, խիստ կերպով խուզվում են գործարկումների իրավունքներն, ինչպես նաև բանվորական սոցիալական ապահովագրության միջոցներն ու իրավունքները։ Բայց ամենից շատ տուժեց աշխատավարձը։ 1923 թ. հոկտեմբերին Բերլինի բանվորը (վորն ամենից լայտ վարձառքովն էր, համեմատած Գերմանիայի մյուս վայրերի հետ) միջին հաշվով աշխատավարձ էր շարաթական մի գույքարից պակաս, այսինքն այդ փողով կարող էր գնել վոչ ավելի մի ցենտեր (Յ. Փութ Յ. Փունս) դեանականձոր, վոր մեզ մոտ յեղած գներով անում և 2 ո. 50 կոսեկ։

Հակուտակ իր կամքին գերմանական բանվոր դասակարգը, մասնված իր առաջնորդներից, գործար համաշխարհային շարեյկ-րբեյեր, վորովհետեւ պայքարի այդպիսի յերքը մյուս յերկրների բուրժուազիայի համար (ինչպես որինակ, Լեհաստանի) ծառայեց իրեւ հիմք՝ իրենց բանվորներին եւ նման պահանջներ ներկայացնելու համար՝ աշխատավարձն իջեցնելու և բանվորական որը յերկարացնելու նպատակով։

ՊԱՅՔԱՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱ- Թուրի գրավումն և ավելի պարզ
ՅԻՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ կերպով ցուցահանեց զեղին Ամստեր-
ՎԱՆԻ ԳԻ ԴԵՄ ՅԵԿ դամի խեղճությունը : Յեր Փրան-
ԱՄՍՏԵՐԴԱՄԻ սիական զորքը մասի Գերմանիա
«ածուխ արդյունահանելու», յեր ողի

մեջ վաստի հստ զգացվեց, Ամստերդամցիները մասը մատին չը
խփեցին վրա համազ վատանգի առաջն առնելու համար : Երանիք
վոչ միայն չրողոքեցին Փրանսիացիների կողմից Թուրի գրավիու-
և գերմանական բանվորներին նորից խեղճելու գեմ, ոյլ սկսեցին
առ յերես ցուց տալ, թե իր այլևս խմբերիալիստական վոչ մի
պատերազմ աշխարհի համար սարսափելի չեւ : Ճիշտ և, Ամստեր-
դամի հոսմի կոնքընը (1922 թ. ապրիլ), աչք խարելու համար
մի բանաձեւ ընդունեց, վարով զինվորական զործուություններն
սկսվելու զետքում անհրաժեշտ եր զանգում հայտարարել ընդհա-
նուր զործագուլ : Բայց բութուալիստն, ի հարկեւ, բանաձեկերից
շատ քիչ և վախենում, մանավանդ, յերբ այլ բանաձեկերն ընդուն-
վում են այնպիսի «ուազմիկ» կազմակերպության կողմից, ինչպիսին
Ամստերդամի Ինսերնացիոնալն և : Հասդայի խաղաղության կոն-
ֆերանսում (1923 թ.) ամստերդամցիներն սաւչարկեցին կովիլ
նոր պատերազմների վտանգի գեմ... լավ կինեմատոպրաֆի ող-
նությամբ, իսկ 1924 թ. ամառը Ամստերդամի զործիչները հայ-
տարարեցին, թե «ընդհանրազես դեռ ես չի ստեղծված մի այնպի-
սի կազմակերպություն», վոր ընդունակ լինի կովել պատերազմի
գեմ», իսկ մինչ այլ նրանք պատրաստվում են տարածելու միլիոն
բացիկներ պատերազմի սարսափների նկարներով և գրելու պատե-
րազմի դեմ մի շաբք հաստափոր գրքեր :

Այս բոլոր զառամյալ թուրամտությունը և բութուալիստի
առաջ վախկոս քծնողությանը կարմիր Պրոֆինանսերնը, յեղադրա-
կան կոմկուսակցությունների հետ միասին հակադրեց մի յեռուն
հեղափոխական հներդիա : Թուրի բոնադրամման որիքին նա ամ-
րագջ համաշխարհային պրոլետարիատին կոչ եր անում կովելու
կերմանական բանվոր զասակարգին կրկնակի ճնշումից ազա-
տագրելու համար՝ պատագրելու հայրենի և Փրանսիական բութ-
ուալիստից : Կոմինաերնի և Պրոֆինանսերնի զեկավարությամբ
Հեսսենում և Ֆրանկֆուրտում կազմակերպվեցին կոմունիստների և
հեղափոխական արհմիությունների միջազգային կոնֆերանսներ,
վորանդ Անտանտայի յերկրների բանվորները գերմանական բան-
վորների հետ միասին քննում ելին իրենց բութուական կառավա-

բությունների գեմ կովկելու ծրագիրը : Ֆրանսիական կոմունիստ-ներն ու սինդիկատիստները , չնայած իրենց կառավարության կո-առաջի հարածանքներին , այդ նույն ՊրոՓինուերնի մասնակցությամբ Ռուսիա ուղարկելու կատաղի կոխվ էլլին մղում Պուանկարեյի բոնապետական քաջարականության գեմ : Կարմիր ՊրոՓինուերնը անընդհատ , ամեն որ հիշեցնում է բանվոր դասակարգվին , վոր հա-ժամաշխարհային բուրժուազիան պատրաստում է նոր թարաններ , նոր ավերիչ իմպերիալիստական պատերազմներ , և վոր այդ վր-տանզից խուսափելու միակ միջոցն է տապալել կապիտալիստների իշխանությունը և հաստատել պրոլետարիատի դիկտուատուրա :

ԱՐԴԲԾՈՎԼԻ ԱՌԱՋԱԱՅԱՅՑ – 1923 թ. վերջին և 1924 թ. սկզբին
ՄԱՍ ԹԱԽԱՆՑՈՒՄԸՐԸ : Համաշխարհային անտեսությունը
ԲԱԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ դեռ ևս գտնվում էր ծանր վիճակում :
ՆՈՐ ԱՃՈՒՄԸՐԸ : Սակայն կապիտալիստներին հաջող-
վում է կարկասել պատովածքների

մի մասը , վերականգնել արտադրության առանձին ճյուղերը : Արևմտյան բուրժուազիան , Ամերիկայի կապիտալիստների հրա-ժամանակառության տակ , փորձում է համաձայնության դալ Գեր-ժանիայի հետ ուսարացիաներն (կոնտրիբուցիան) սահմանու-նողասահով , բայց վոչ թե Ֆրանսիական զինվորների ոգնությամբ , այլ «Հազար ձեռվ» , սիրով , խաղաղությամբ «Համաձայնության» դալով : Գերժանական բուրժուազիան գեմ չեր յորոշ զիջումներ անելուն , հույս ունենալով , վոր մեծ ոգուստի կը ծածկի իր վճա-րումները զերժմանական բանվորներից նոր հյութեր քամբերով : Վերջապես , Արևմտյանքի կապիտալիստներն հույս ունեցին ամրա-ցընելու իրենց տնօւնական թ . Ա . Շ . Մ -ի հետ իրենց անհամառ-կան հարաբերությունները վերականգնելու միջոցով : Ի վերջո , համաշխարհային անտեսության դրսթյունը լավանում է մի փոքր : Նվազում է գործազրկությունը , թուրանում է կապիտալի-ստաջխաղցումը⁹ : Բանվորական մասսաները հաշվի յեն տանում այս զրությունը և ամենուրեք սկսում են անցնել հակահարձակ-ման : Այդ հակահարձակումն սկսվում է գեռ ևս 1923 թ . գարնանը Հյուսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Ֆրանսիա-յում , և 1913 թ . վերջին և 1914 թ . սկզբին բնդորիկում է հա-մարյա ամբողջ Յեփրուայն :

Այս բորբի համեմքով վոչ միայն Փրանսիական բանվորնե-րին և հաջողվում հաճախակի , կարճամատեական հարցածներով շահել մի

շարք զործագույներ, այլ և գերմանական բանվոր դաստիարակին հաջողվում է 1913 թ. աշնան ջարդից վոտքի կանգնել։ Մարկի անկումը կանգ է տոնում, և գերմանական բանվորն, սուածիսազաց-

* Արդեն 1911 թ. վերջին սկզբեց սկասվել Համաշխարհային անսեսության ընդհանուր վիճակի բարելավումը և իր հետագա դարձացման հասավ 1923-24 թ.։ Այդ և ցույց տալիս հետեւյալ աղյուսակը (1923-24 թ. տվյալները բերված են բառ ընկ. Վարդայի նյութերի)։ Թվերը ցույց են տրված միւրին տոններով։

	Անդիմա	Անհրիկա	Ֆրանսիա	Գերմանիա
Ա	1913	292,1	516,0	40,8
	1921	164,0	448,0	36,5
	1922	252,0	414,1	43,3
	1923	285,0	591,0	39,0
	1924	273,0	505,0	59,0
Զ	1913	10,4	31,2	5,2
	1921	2,1	16,0	3,4
	1922	4,8	30,7	5,1
	1923	7,4	40,0	5,3
	1924	7,4	31,0	7,5
Պ	1913	7,6	31,8	4,6
	1921	3,7	16,8	3,1
	1922	5,8	33,2	4,5
	1923	8,5	44,9	5,0
	1924	8,4	37,8	6,9

Գերմանիայի նկատմամբ արդյունահանվող ածուխի քանակից դուրս է հանված թուխ ածուխը (այն ժամանակ 1913 թ. համար համապատասխան թիվն է—190 միլ. տոնն)։ Ընդհանրապես մի շարք յերկրներ դեռ ևս չեն հասել նախադատերազմյան չափին։ Ավելացումը ֆրանսիայում բացարձում և լսուարինգիայի միացմամբ։

ման անցնելով, հաջողեցնում է իր աշխատավարձը մի փոքր բարձարցնել: Այսպես որինակ, 1923 թ. գեկտեմբեր—1924 թ. փետրվար ժամանակաշրջանում գործադուլ են հայրարարում Գերմանիայի մետաղագործները, Համբուրգի 80,000 դոկերները, քիմիագործները Լյուդվիգսհամբեռում, 1924 թ. մարտ-ապրիլ ժամանակամիջոցում՝ յերկաթուզայինները և վերջատես 1924 թ. մայիսին-Շուռի լեռնագործները: Անգլիայում թշնանության գլուխ և անցնում (ձիչտ և, կարճ ժամանակով). Մակդոնալդի սոցիալ-համաձայնողական կտորավարությունը, վորը ամեն կերպ ոժանդակում եր ձեռնարկողներին, բայց և այնպես այդ ել նպասառում է գործադուրային շարժման ամերուն (գործադուլ են հայրարարում դոկերները, մեքենավարներն ու հնոցավառները, արամվայի ծառայությունները և այլն):

Վորքան ավելի յի աճում, կենդանանում բանվորական շարժումը, այնքան ավելի յին աճում արհմիությունների կարմիր ինտերնացիոնալի հզորությունն ու ազդեցությունը: Վերջինս ավելի ու ավելի յի տիրապետում ու գեկավարում բոլոր յերկրների բանվոր գասակարգի լայն մասսաների շարժումը, ուժեղացնում և իր սելցիաները, միջազգային պրոպագանդայի իր կոմիտեները և սրբուրեն կապվում ե վերածնվող հեղափոխական Արևելքի հետ (Հնդկաստանի, Չինաստանի, Յապոնիայի), անց և կացնում կարմիր փոխադրողների խաղաղ-ովկյանյան կոնֆերենցիան:

ԽԵԹԱԲՐՄԻԶՄԻ ՔՈՅՑՔԱՆ-ՑԱԽՄԸՐԸ: ԱՄՄՏԵՐԴԱՍՄԻ «ԶԱԿ ԹԵՎԼԸ»: ԱՄՄՏԵՐԴԱԿԱՆՄԸՐԸ ՑԱԽՄԸՐԸ ՑԵՎԿԱՑԸ:

ԿԱՆ ՃԱԿԱՑԸ:

Այն 18 ամիսը, վոր բաժանում է ՑԱԽՄԸՐԸ: ԱՄՄՏԵՐԴԱՍՄԻ Պրոֆինտերնի 2-րդ կոնգրեսը 3-ից—«ԶԱԿ ԹԵՎԼԸ»: ԱՄՄՏԵՐԴԱԿԱՆՄԸՐԸ ՑԱԽՄԸՐԸ ՑԵՎԿԱՑԸ:

Վոչ միայն Պրոֆինտերնի ուժեղացման շըջանն է, այլ և միջազգային ուժքորմիզմի անբնդհամար:

Այն անը: Իրենց անկրման մեջ Ամստերդամի առաջնորդություններն հասնում են այն աստիճանի, վոր Գերմանիայում որինակ, ըստ եյության գառնում են Փաշիզմի ձախ թեր: Դա, ինչպես նաև կոմունիստական ազիտացիայի և պրոպագանդայի (խոսքով և գործով) աճումը բանվորական լայն շրջաններում առաջ ե բերում մի խոր թեքում, նրանց աշխերն սկսում են բացվել և նրանք մասսաներով սկսում են հեռանալ իրենց գեղին առաջնորդներից: Մասսաների խմորումը Ամստերդամի Ինսերնացիոնալի մեջ առաջացնում ե ներքին պայքար: Առաջ և գալիս այս կոչված «ձախ թեր», վորի զեկավարն և փոխադրողների առաջ-

նորդ Եղդո Ֆիմմենը և Հենգուում է նաև անդիմական արհմիությունների վրա : «Զախ թեն» ի հարկե դեռ ևս չունի կարմիր արհմիությունների Հեղափոխտկանությունը . նա վողջունում է Խորհրդացին իշխանությունը , բայց ցանկանում է , վոր նա լինի ԽՍՀՄ-ում և վոչ իրենց մոտ : Բայց և այսպէս , նա թեկուզ խոսքերով , ձրդում է միասնական ճակատ հաստատել Հեղափոխտկան արհմիությունների հետ , նորատակ ունենալով միասին պայքարել կապիւսիի դիմում :

Խուրի 1923 թ . գարնան դեկտեմբեր շարժեցին պեղին միությունների մեջ մանազ բանվորների մի նշանակալից մասը : Դեղին տուղնարզների զավաճանությունն այնքան ափաշկարա յիր , վոր բանվորների լայն մասսաների ճնշման տակ 1923 թ . մայիսի վերջին Բերլինում Հրավիրված փոխադրուդների միջազգային կոնֆերացիան , վորի նախագահը նույն Եղդո Ֆիմմենն էր (Խորհրդացին Ռուսաստանի արհմիությունները առաջին անգամ Հրավիրվացին այդ կոնֆերացիային) , վճռեց ստեղծել ամրող աշխարհի փոխադրուդների միասնական ճակատ , վորպեսզի միասին կովին Հասունացող նոր իմպերիալիստական պատերազմի գտանդի դեմ : Վճռվեց նախանդիսու ունեցող քաղաքներում , հանդուցային և կարենոր յերկամթուղային կենտրոններում ստեղծել Հատուկ Հսկիչ Հանձնաժողովներ , վորոնք կարիք յեղած դեպքում կարողանային դադարեցնել սազմական ամեն տեսակ պիտույքների , ուստեւիքի ժամակարարումը , գաղաքեցնել զորքի փափակրությունը և այլն , ստեղծել միջազգային զործողության կոմիտե և ՀակաՓաշիստական Փոնդ : Բուրժուազիայի դեմ կովելու համար միջազգային բանվորական չարժման Հեղափոխտկան ուժերի միացման գործում զա մի խոչըր առաջադիմություն էր , մանավանդ , վոր բրանսուրատը կապիտալիստական տնտեսության ամենահիմնական կենսութան նյուրդերից մեկն է :

Սակայն , Ամստերդամի Ինտերնացիոնալն անմիջապես ահազանդ հաշեցրեց : Փոխադրուդների Բերլինի միջազգային կոնֆերացիան սպասնում էր լուրջ կերպով խախտելու համաձայնողականների ազգեցությունը : Անմիջապես սկսվում է սարսուած կոնֆերացիայունը : Բնակչանությունը : 1923 թ . հաւլիսին Ամստերդամի Ինտերնացիոնալն հայտարարում է , թե նա չիշտ և համարում փոխադրուդների միջազգային կոնֆերացիայի բոլոր վարչումները պատերազմի դեմ պայքարելու , ուսկցիալի և Փաշիզմի դեմ կովելու մասին , վոր ինքն և կողմանկան միությունական կենսութան

հոգածն ճակատին, բայց միայն մի փոքրեկ պայմանով։ զիտեք ինչ, անհրաժեշտ է, վոր խորհրդային միություններն ու Կարմիր Պրոֆենտերնը գործով ցույց տան, թե իրենք միասնականության հն ձգում՝ իսկ դրա համար՝ դադարեցնել ամեն մի պայքար Ամստերդամի Ինտերնացիոնալի դեմ և ընդունել նրա ծրագիրը։ Հեղափոխական արհմիությունների համար նման «միասնական ճակատ» հաստատելու մասին խոսք անդամ լինել չի կարող։ Կարմիր Պրոֆենտերնը իր գործադարներն ու ոկզունքները նրա համար չկոփեց քաղաքացիական պատերազմի բոցերում, Հեղափոխության հասցում, վորաբեսդի անփառունակ կերպով անձնատուր լինի Ամստերդամցիների վողործածությանը։ Այսպիսով, համաձայնականները նորից քանդեցին միասնական ճակատը, վորի առաջին քայլն եր հանդիսացել վախարդողների միջազգային կոնֆերենցիան։

Միասնական ճակատը քանդելու գործը շարունակվում է, Ամստերդամի մերժում և միասնական ճակատի մասին յեզած այն բալոր ասացարկությունները, վոր մի քանի ամիս անց նրան անում են Պրոֆենտերնը և Հ. Ա. Մ. կ. կ. ան (1923 թ. գեկանմբերին), Համագործակցին կոնֆերենցիային և այլն)։ Ամստերդամն ամեն կերպ Հակառակվում և խորհրդային միություններին դեղին արտադրական ինտերնացիոնալների մեջ ընդունելուն (ընդունվել հաջողգում և միայն «Մանդի և Համբի» Համամիութենական Միությանը)։ Վերջապես, Ամստերդամցիները շարունակում են հեղափոխականներին վասրել դեղին միություններից։

Ներքին հակառակություններից պատակառած բանվորական լայն ժամանակների առաջ ավելի ու ավելի մերկացրված և նրանց կողմից բրդած, արհմիությունների Ամստերդամի Ինտերնացիոնալն ավելի ու ավելի արագությամբ դեպի անկումն և զնում։

ԱՐԲՄԻՐ ՊՐՈՖԵԿԻՆՏԵՐՆԵ

Յ-ՐԴ ԿԱՆԳՐԵՍԻ

Պրոֆենտերնի Յ-ՐԴ կոնգրեսին

(1924 թ. հուլիսին) թե՛ Ամստերդա-

մը և թե՛ Պրոֆենտերնն ունեցին Համարյան Համաստը (քանակով) ույժեր—10-ական միլիոն ամեն մի կողմից։ Բայց այն ժամանակ, յերբ Ամստերդամը առաջվա պես մնում էր միմիայն իրեն յեզրոպական ինտերնացիոնալ (նրա կազմի մեջ մտնող 22 յերկրներից 19-ը յեզրոպական են), պրոֆենտերնը վռաքով պինդ կանգնած Արևելքում, ինչպես նաև ամբողջ աշ-

իսարհում, նրան հաջողվեց համախմբել 49 յերկրների առանձին միություններ, փոքրամասնություններ և խմբեր^{*}):

Աստ Պրոֆինտերնի Յ-րդ կոնգրեսին ներկայացրած Գործըյությունի հաշվետվության, «յեթե մերզնելու լինենք առավել խոչըն յերկրները, վորոնց բանվորական չարժուածքը վճռական գեր և խոզում Անդլիս, Գերմանիա, Միացյալ Նահանգներ, Իտալիա, Եսպանիային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն և Յապոնիա), առաջ մենք կը տեսնենք հետեւալ պատկերը՝ Գերմանիայում մեր ուժերը հավասար են, Ֆրանսիայում մենք սնենք ավելի, քան կազմակերպված բանվորների (60 տոկոսը, Իտալիայում—50 տոկոսը, Արևոտնականում—100 տոկոսը: Միացյալ Նահանգներում մենք պայքարում ենք Գոմոգերսի հետ, Ամստերդամի Ինտերնացիոնալը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում շատ քիչ ազգեցություն ունի, այն ինչ Պրոֆինտերնի ազգեցությունն այնուն տարածվում է մոտ 2 միլիոն բանվորների վրա: Յապոնիայում ամստերպացիոները զետ նոր են կապեր համաստում, այն ինչ մենք այնուեղ բարեկան պինդ նստած ենք: Ան-

^{*}) Բացի վերեւում հեշված 22 յերկրներից, վորտեղ մենք մեր կազմակերպություններն ունենք, Պրոֆինտերնը կապված ե հետեւալ յերկրների հետ՝ ԽՍՀՄ-ի Հանրապետությունների, Միացյալ Նահանգների, Բրազիլիայի, Չիլիի, Փերույի, Աւստրալիայի, Մեքսիկայի Իրանդիայի, Հնդկաստանի, Ազգիների, Կուրսարալիայի, Հունաստանի, Յավայի, Յապոնիայի, Չինաստանի, Խորեայի, Լիտվայի, Էստոնիայի, Պարսկաստանի, Արգենտինայի, Տաճկաստանի, Նորգերիայի, Ֆինլանդիայի, Ալժիրի, Թունիսի: Պրոֆինտերնի կառուցվածքի, ինչպես և աշխատանքի բարդությունն այն է, վոր նրան են հարում վոչ միայն ամբողջ կազմակերպություններ, այլև փոքրամասնություններ, առանձին միություններ և խմբակներ:

Պրոֆինտերնին հարող բոլոր կազմակերպությունները կարելի յե բաժանել հետեւալ խմբերի. 1. Յերկրներ, վորոնց ընդհանուր-արհեստական կենտրոնները, հարում են Պրոֆինտերնին, ԽՍՀՄ (6,400,000), Ավստրալիա (400,000), Յեղիպտոս (50,000), Էստոնիա (25,000), Պարսկաստան (25,000), Յավա (27,000), Չիլի (150,000). 2. Յերկրներ, վորտեղ ունֆորմիստական կազմակերպություններին զուգընթաց գոյություն ունեն նաև հեղափոխական կազմակերպություն-

ԴՐԱԺԱՅՈՒՄ մեր գաղափարական ազգեցության տակ են գտնվում՝ կաղմակերպված բանվորների 20—25 տոկոսը»:

Արհմիությունների Կարմիր ինտերնացիոնալի 3-րդ կոնֆերանսի մեջ Հայտարարի բերեց այն ամենը, ինչ ավել էր հեղափոխական պայքարը 2-րդ կռնդրեսից հետո, 18 ամսվա ընթացքում, ինչպես նաև ճիշտ կերպով գծեց իր բանաձևերում հեղափոխական, կոմունիստական արհշարժման հերթական ինդիրներն ու հետանկարները:

ԱՄՄՍԵԲԴԱՄԻ «ԶԱԽ ՊԵՏՔ և ամեն կերպ ոգտագործել ԹԵՎԸ» ՊԵՏՔ և ՈԳՏԱԱ Ամսուերդամի «Ճախ թեր»—տասց Յ-

ԳՈՐԾԵԼ: րդ կոնգրեսը: Մենք յերբեք չենք փոր-

ձում մեզ խարել, մենք չառ լավ գիտենք, վոր այդ «Ճախ թերն» այնուամենայնիվ գեռ համաձայնողական թե և, վճուական մարտին կարող ե մեզ զավաճանել, բայց և այնպես այդ թեփ յերեան գալը բացատրվում և գեղին արհմիությունների բանվորական յայն մասսաների ճնշումով, վորոնք անցնում են մեր կողմը, Մոռկվայի և կոմունիդմի կողմը: Պետք ե աջակցել և վառ պահել մասսաների մեջ այդ սպազմիցիցին տրամադրությունը և ոգտագործել այն բյուրոկրատաների գեմ կովելու համար:

Ներ՝ Ֆրանսիա (450,000), Զեխո-Ալովակիա (230,000), Հունգարիա (15,000), Լատվիա (15,000), Բելգիա (15,000), Բրազիլիա (40,000), Յապոնիա (կրած ջարդից հետո գժվար և վորոշել քանակը), Գերմանիա (Ունիոնը և անկախ միությունները—200,000), Հունաստան (20,000). Յ. Յերկըներ, վորտեղ ոեֆորմիստական միությունների ներսում կան լուրջ սպազմիցին շարժում՝ Գերմանիա (2,500,000), ԼՂՀաստան (50 տոկոս), Միացյալ Նահանգներ (2,000,000), Իտալիա (50 տոկոս), Նորվեգիա (50,000), Շվեյցարիա (40,000), Ավստրիա 4100,000), Դանիա (10,000) և այլն. 4. Յերկըներ, վորոնք քաղաքականութեն մեզ հետ են, բայց վոստիկանական պայմանների պատճառով չեն կարողանում միանալ Պրոֆինտերնին՝ Ֆինլանդիա (48,000) և Հարավ-Ալավիայի, Ռումանիայի, Բուլղարիայի, Բուլղարիայի, Իսպանիայի արհշարժումը. 5. Յերկըներ, վորտեղ տրհմիությունները գունավորված են ազգային գույնով՝ (Հնդկաստան, Իրլանդիա, Չինաստան, Կորեյա, Տաճկաստան) և վորտեղ մենք այդ կաղմակերպություններում ունենք շատ լուրջ հենարաններ: (Պրոֆինտերնի Գործըրյուրոյի հաշվեավությունը Պրոֆինտերնի Յ-րդ կոնգրեսին. էջ՝ 306—307):

ԿՐԵԲՔԻ ԴԱՄԱԼԵՍՄԻ ՊԼԱՆԻ : Դոուեսի պլանի հետ անհրաժեշտ եղած ան կուկվ մզել, —այսպես վորոշեց կոնգրեսը : Ի՞նչ և այդ պլանը : Պատերազմը վերջանալուց հետո, 1919 թվին Անտանտան Գերմանիայի վրա զրեց մի շաված կոնտրիբուցիա՝ 375 միլիարդ վոսկի մարկ : Վորագեսի ըմբռնել արդ զումարի Հրեշտային մեծաթյունը, պետք է ի նկատի ունենալ, վոր ամբողջ աշխարհում վոսկու պաշարը կազմում է վոչ ավելի, քան 50—60 միլիարդ վոսկի մարկ : Գերմանիան, ի հարկե, այդ բարոր վճարել չեր կարող : Չոգնեց նոե այն, վոր Փրանսիական զորքերը վրավեցին Ռուրը, Գերմանիայի կարենրազույն տնտեսական շրջանները (1923 թվին) : Ահա այդ ժամանակ հրապարակ յեկավ «Պոուեսի պլանը» : Նրա միտքն այն է, վոր Գերմանիային ժամանակ է արբաւմ ընկարացիաները (կոնտրիբուցիան) վճարելու համար (հետաձգվում է ժամկետը), և բացի զրանից, իր արդյունաբերությունն ամրացնելու համար «Գերմանիան ստանում է 800 միլիոն վոսկի մարկի փոխառություն» : Երա փոխառեն Գերմանիայի յերկաթուղիները ենապես անցնում են Անտանտայի ձեռքը», Անտանտան իրավունք է ստանում խառնվելու Գերմանիայի ամբողջ արնետեսական կյանքին, վաստորեն Անտանտան կազում է նրա ձեռքն ու վորքը և Գերմանիան, իհարկե, մեծ ոգուտով կը վճարի իրեն ներկայացրված հաշիվը :

Համաձայն Պոուեսի պլանի՝

1. Տրանսպորտ տարեկան կը տա 250 միլիոն վոսկի մարկ :

2. Փայտափառական ընկերությունը, վորին անցնում էն Գերմանիայի յերկաթուղիները (ընկերության մեջ մեծամասնությունը Անտանտայի նշանակած մարդկին են) յերկաթուղուց կը քերթի 660 միլիոն մարկ՝ տարեկան :

3. Հարկերի միջոցով Գերմանիայի ընդհանուր բյուջեից դուրս կը քաշի 1,250 միլիոն վոսկի մարկ :

4. Ամբողջ գերմանական արդյունաբերությունը կը համարվի Անտանտայի մոտ իբրև զրավ՝ զաշնակիցների բացարձակ տրամադրությունն տակ են լինելու մաքսային տուրքերը, զարեջրի, ծխախոտի և չափարի արդյունաբերությունը, ընդհանուր առմամբ, արդյունաբերությունը հնարավորություն կը տա դուրս քաշելու 300 միլիոն վոսկի մարկ :

Այս բարորը միասին խոսանում է տարեկան մի կլորիկ դուրսամար—2,460 միլիոն վոսկի մարկ : Գերջին հաշվով՝ այն և դուրս

դալիս, վոր Գերմանիան տարեկան պարտավոր և վճարելու այն բոլորը, ինչ վոր նա հարկերի միջոցով կարող է քամել ազգարնակ-չությունից, բացի այն մի փոքր գումարից, վորն անհրաժեշտ է կառավարությանը իր ներքին ամենաանհրաժեշտ ծախսերը ծած-կելու համար։

Այդ հարկերն ու մից պիտի պլոկեն։ Ամենից առաջ, ի հար-կե, աշխատավորներից։ Գերմանական կապիտալիստներից հազիվ պահձիք այդ բոլորի մեկ ութերորդ մասը։ Այն էլ գերամանական բուրժուազիան ձգաւում և, թե՛ իր վնասները և թե՛ վճարումները, զցել գերմանական բանվորների ուսերի վրա, իսկ դա նշանակում է բանվորական որդան յերկարացում և կրծտումն առանց այն ել սովորած աշխատավարձի։ Արդեն սկսվել է յերկաթուզայինների մաս-սայական կրծտումն։ Երանց թիվը 936,000-ից պետք է իջեցվի 793,000—143,000-ը պետք և փողոց չպրոլեն։

Անհրաժեշտ և, ասում ե Յ-րդ Կոնդրեսը, ամբողջ աշխարհի բանվորների բայն մասսաներին դրավել ֆուտեսի պլանի դեմ պայքարելու գործին, վորովհետեւ այդ պլանը կյանքի մեջ կիրա-ռելը, «այդ սոսր դավագրության իրականացումը կը նշանակե վոչ միտյն գերմանական բանվորներին կուլի դարձնել, այլի կը նշա-նակե իջեցնել բոլոր յերկրների, և ամենից առաջ Անաստայի յերկրների բանվորների կենսական մակարդակն ընդհանրապես»^{*)}։

ՈՒԾԱՐԱԲԻԹՅՈՒՆԻՆ ԳԱԲ-
ԾԱԲԿՈՄՆԵՐԻՆ

«Ուշագրություն գործարկումնե-
րին, Հեղափոխության այդ վսաս-
հելի հենարաններին», —հայտարա-
րեց Պրոֆինանսերնի յերկրող կոնդրեսը։ Հենց Հեղափոխական բան-
վորական սոսրին շերտերն ընդգրկող գործարկումների չուրջը կը
հաջողվի Կոմկուսակցությանը կազմակերպելու բանվորական
բայն մասսաներին և նրանց առաջնորդելու դեսի վճռական ձա-
կատամարտերի։

^{*)} Դուռեսի ոլլանը վոչ միայն կը նշանակե սպարան ձգել գերմանական բանվորի վզին, դա միաժամանակ նշանակում և, վոր Ամերիկան վճռականորեն խառնվում և յելքութական գործերին։ Դուռեսն ինքն ամերիկական դեներալ և, Մորգանի տրեսուի, Ամերիկայի անթաղակիր հրաժարողի մարդը։

Ամերիկան, վորն իր արտօղը արական ուժերի գարգաց-
մամբ առանց այն ել աշխարհիս ամենահարուստ և ամենա-

Արեմուտքի յերկրներում գործարկուներ դեսևս շատ քիչ կան : Կոմէկուսակցությունն ու Պրոֆինտերնի կողմնակիցները նույնիսկ Գերմանիայում գենես բավականաչափ չեն ամրացրել և սպասագործել գործարկուներին , այնինչ ու կարևորագույն և առաջնակարգ խնդիրներից մեկն և : Յեթե Խորհրդային Միության մեջ արհեստագործություններում գտնվում ե գործարանային պրոցեսարիատի 100 տոկոսը , ապա բուրժուական յերկրներում բանվորների հակայական մասսաներ դեռևս միություններից գուրս են մնում : Այսպես , որինակ , Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 18 միլիոն բանվորներից միայն 3 միլիոնն են միությունների մեջ : Բանվորներին ներքեվից , ցածից արհեստակցական կազմակերպությունների մեջ գրավելու լավագույն միջոցը գործարկուներն են : Բացի գրանիցից , այնտեղ , ուր զեղին առաջնորդներին հաջողվել և անջատել արհշարժումը , ուր բանվորները ցրված են զեղին և կարմիր արհմիությունների մեջ , այնտեղ գործարկուն ամենալավ միջոցն և ցածրից բանվորներին ի մի ձուլելու , զեղին առաջնորդների ապահուության տակից նրանց գուրս կորցելու և Կոմունիստական կուսակցության հետեւ տանելու համար : «Ահա թե ինչու մռաւակա ժամանակաշրջանում Պրոֆինտերնի կողմնակիցների կա-

հզոր յերկիրն եր , 1914—1918 թ . թ . իմպերիալիստական պատերազմի ժամանակ անասելիորեն վաստակեց ի հաշիվ Յեվրոպային ավագ ռազմական պաշարեղենների : Յեթե սուտերազմից առաջ Միացյալ Նահանգները Յեվրոպային պարտք ելին հինգ միլիարդ դոլար , ապա պատերազմից հետո Յեվրոպան պարտք և Միացյալ Նահանգներին 11 միլիարդ դոլար : 1924 թվին Միացյալ Նահանգներն իրենց մոտ կենտրոնացրին ամբողջ աշխարհի վոսկու պաշարի կեսը (9 միլիարդ դոլար) :

Գյուղատնտեսության մեջ Ամերիկայի մասն և կազմում ցորենի համաշխարհային բներքի մեկ քասորդը , հաճարի մեկ յերբորդը , յեղիպտացորենի մոտ յերեք քասորդը :

Ամերիկական արդյունաբերության հզորությունը կարող են պատկերացնել հետեւյալ թվերը . ներկայումս ամբողջ աշխարհում հաշվում ե մոտ մի միլիարդ աշխատունակ աղբարնակություն , իսկ մեխանիկական շարժիչների (ՃՎՐԹԵ-ԱՄ-ՖԵՔՆԱՆՆԵՐԻ) հզորությունն ամբողջ աշխատությունը հաշվում են 5 միլիարդ ուժ :

բեռագույն ինդիքտն և լինելու՝ պայքարել դործարկրմերը նվազելու համար» :⁹⁾

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՅԻ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆՎԱԾ
և կովել արհշարժման համբարտ-
ԳՈՐԾԱՐԿՈՄՆԵՐԻ ՎՐԱ : կանությունը վոչնչացելու համար,
պիտի ձգտել իրականացնելու այն լոգունգը, վոր դեռևս Պրօֆ-
ինակընի առաջին կոնդրեսն եր առաջադրել . «Մի ձեռնարկու-
թյան, մի արտադրության մեջ—մի միություն» :

Մինչեւ որս ոեփորմիստներն ուժեղ են նաև նրանով, վոր
նրանք արհշարժումը բաժանում են ժանր, համբարական, մի-
ժիանց զեմ թշնամի միությունների և, ոգտվելով նրանց առ-
րաջայություններից, կարողանում են իրենց ձեռքին պահել
տաքուկ տեղերը : Դրան պետք է վերջ տալ : Միացած սուտիլու-

Ամբողջ յերկրագնդիս աշխատունակ ազգարնակության
^{1/16}-րդը պատկանում է Միացյալ Նահանգներին, իսկ նր-
անց արդյունաբերության շարժիչների ուժն հավասար և
համաշխարհային նորմայի կեսին— $2\frac{1}{2}$ միլիորդ մարդ-
կային ուժիք :

Միացյալ Նահանգներն արդյունահանում են քարածուխի
համաշխարհային արտադրանքի 50 %-ը, չուզունի մոտ 60 %,
պոլպատի արտադրության 60 %-ը, պղնձի—60 %-ը, ցինկի
47 %, իսկ նազմթի՝ նույնիսկ—72 %-ը :

Միացյալ Նահանգների ավտոմոբիլների թիվը կազմում է
աշխարհիս ավտոմոբիլների 84,4 %-ը, յերկաթուղները կազ-
մում են համաշխարհային ցանցի 36 %, առետրական նավա-
տորմելը (վոր պատերազմից առաջ համարյա դրյություն
չուներ) կազմում է համաշխարհային տարողության (տոն-
նամքի) 25% -ը :

Վերջապես Միացյալ Նահանգների պայային յեկամուտը
յերկու և ամելի անգամ մեծ է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմա-
նիայի և Յապոնիայի պայային յեկամուտներից միասին վեր-
ցրած :

Ամերիկական կապիտալիզմի արդյունաբերությունը, վոր
սուերծվեց պատերազմի հետևանքով, ստիպում է նրան կտ-

⁹⁾ Այս, ինչպես և հետագա շակերաների մեջ առնված են
Յ-րդ կոնդրեսնի վորոշումներից վերցրած ցիտատները .

հացող կապիտալին բանվոր դասակարգը հակազքելու յե իր հզոր արհեստակցական արտադրական դիվիզիաները : Պրոֆինանսերնի ձ-բդ կոնգրեսը կոչ է նում . «Վերակառուցել ամբողջ արհեստակցական շարժումը (արտադրական սկզբունքի հիմունքով) և վոչ թե փորձել սաեղծելու ամբողջ յերկրի արհշարժումից կարված տեղական արտադրական միություններ» : Նոր արտադրական միությունների մեջ պետք է մացնել խակական հեղափոխական բովանդակություն :

«Պայքար արտադրական միությունների համար , հիմնված դորձարկմաների վրա» , —ահա ամբողջ հեղափոխական արհեստակցական շարժման լոգունով :

ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԵԼԱՌ Կոնգրեսը դժել եր մի քանի դորձնակերպի : կան միջոցներ կապիտալիստական յերպարկությունների վրա , ահա ամբողջ հեղափոխական արհեստակցական շակառապայում՝ ծավալելու համար , նըստակած ունենալով պաշտպանել 8-ժամյա բանվորական որը , վորակել կապիտալիստները խելք են և պայքարել ձեռք բերելու 8-ժամյա բանվորական որ այսուղ , ուր այդպիսին դեռևս չկա : Բայց ինչպես պետք է կավել : Կոնգրեսն ասում է , թե բուր-

տազի կերպով նոր չուկանների հետեւ ընկնել : Այսուղից և բղխում ամերիկական խմբերի ամբողջից մի աճումը , Ամերիկայի տեսլորեն զինվելը (ամերիկական նախատորմը պատերազմից առաջ մի քանի անգամ փոքր եր անուլիսականից , իսկ այժմ նրա հետ հայտարգել ե) :

Կիրառելով Դուռեսի ովլանը , տալով Գերմանիայի փոխառության մեծ ժամը , Միացյալ Նահանգներին հաջողվեց նշանակելու իր ներկայացուցչին բեղաբացիաների զմիավոր կամքսար : Միացյալ Նահանգները փաստորեն իրենց թաթը գերել են գերմանական արդյունաբերության վրա , ձրդառում են Գերմանիան դարձնել իրենց գաղութը և վճարումներից ստանալ առյօւծի բաժինը : Այսպես , ովկյանոսի այն կողմից գեղի Յեվրոպա յեն մեկնվում խոչըրագույն Փինանսական խմբերի , Մորգանի և կոմպանիայի գիշտափէ ձեռքերը , վորոնք Ամերիկայի ամբողջ կյանքն են վորոշում : Հենց այդ ձեռքերն են , վորոնք ոգնում են յեվրոպական բուժուագիայն՝ խեղդելու գերմանական բանվոր դասակարգը :

ժուազիային պետք է հենց իր զինքով հարգածել։ Շատ լավ ըստ-
բրոնելով, մե այժմ գասակարգային պայքարին ինչպիսի սուր-
բնութեաւ և ստացել, բուրժուազիան ամեն մի բանվորական գոր-
ծազուլի վրա հարձակվում է բանության իր ամբողջ ապարատով՝
զորքերով, գաղտնի վտանիկաններով, մամուլով և այլն։ Նույն
ձեռվ ել բանվոր գտակարգն անհամաժառի պիտի ստեղծի իր
դործագուլային պայքարի ուղարկառությունը, նրա մեթոդներն
ու յեղանակները։ «Փետք է յերեք չմոռանալ, վոր առանց պլա-
նի, սուսնց կենորունացրած դեկամերության, առանց առանձին-
առանձին մասերը մի ուղղություն ափող կամքի յեթարկելու կր-
ոիվ զնացող բանակը յենթակա յի պարագանեան»։

Բանակին հարկավոր են լավ հետախույներ։ Կապիտալիստ-
ները շատ լավ տեղյակ են բանվորական կարգակերպությունների
զրությանը, հետեապես՝ մեզ ել պետք է տնտեսական հակա-հե-
տախուզումն։ Չե՞ զար քանիվորական մասսաների պայքարը ձիչա-
զեկագարել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ մենք ծանոթ
ենք մեր հակառակորդների կառուցվածքին և ուժին։ Զենոնարկո-
ղական կազմակերպությունների և նրանց ոժանդակ մարմին-
ների, մամուլի հետ ունեցած նրանց կազմի, բանվորական լիդեր-
ներին կաշառելու և անրարոյականացնելու մեթոդների և յե-
զանակների, բանվորական կազմակերպությունների մեջ ձևո-
նարկուների, գործակաբների սոզոսկելու ձեերի մանրակրկիւ-
կերպով ուսումնասիրությունը հանգիստում և իրեն հիմնա-
կան նախաօպայման ձեռնարկուների զեմ հաջող պայքար մղելու
համար»։

Բանակն հաղթում է, յեթե զրավում է յերկրի կարենարարույն
հանգույցային կետերը, կայարանները, բարձունքները և այլ վայ-
րեր։ Ձիչա ախալիս ել, բանվոր գասակարդի և բուրժուազիայի
կովի մեջ ույժերը չսկեսք ե ցրել, սկեաք և բուրժուազիային հար-
գածել նրա ամենախոցելի տեղերում, պետք է զրավել արդյունա-
բերության իշխող բարձունքները։ Ուստի և Պրոֆինանսնի կոն-
գրեսն անհրաժեշտ է համարում «իր կողմնակիցների ու զարու-
թյունը կենարունացնել աշխատանքի այն ճյուղերի բանվորներին
կազմակերպելու գործի վրա, վարոնիք բուրժուազիայի զեմ մղած
բանվոր գասակարդի պայքարում կարող են վճռական զեր խա-
ղալ (արանսապորն, լեռնագործություն, մետալուրգիա, քիմիա-
կան արդյունաբերություն, ելեկտրականություն, գազ, հեռու-
գիր, ուղղիս և այլն)։ Առանց այդ հիմնական արագբություննե-

բը նվաճելու , բանվոր զաստկաբգի պայքարը մատնված և անհաջող դության» :

Բայց դա բավական չե : Պետք և կարողանալ մի յերկրի ներուժը լավ կազմակերպված հեղափոխական պայքարին առաջի ջաղգային թափ , ծավալ , պետք և սովորել միաժամանակ կոչվ հանել մի քանի յերկրների պրոլետարիատի : «Այդ նպատակավ ցանկալի յև ստեղծել խառն կոմիտեներ (Փրանս-գերմանական , գերմանո-իհական , գերմանո-չեխական , Փրանս-իտալական , Փրանս-գերմանո-անգլիական , գերմանո-ուստական , ուստ-կան և այլն) , վորոնց մեջ կը մանեն արտադրության կարեռագույն այուղերի բանվորները միասին կամպանիաներ և յելությներ կաղամակերպելու համար» :

Կոնգրեսը կրկին անգամ հաստատեց այն ամբողջ վնասը , վոր տալիս են սասայական կամ արդային հատկանիշով կառուցված միությունները (Ամերիկայում կառուցողների առանձին միություններ կան չինացիների համար , առանձին՝ սպիտակների , առանձին՝ անգլիացիների և առանձին գերմանացիների համար) , վորովհետեւ զա բաժանում և ցրում ե բանվոր զաստկաբգի ուժ-ժերը և ձեռուու յե միայն բուրժուազիայի համար : Մասնավորա-ւես ի նկատի ունենալով , վոր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում «սպիտակ արհմիությունները նեղը բանվորներին իրենց չարքերը չեն բնդունում , կոնգրեսն հաւաքվոր համարեց , իբրև ժամանակավոր միջոց , թույլ տալ նեղրերին իրենց համար արհմիություններ կազմակերպելու , միայն այն պայմանով , վոր Նրանք անհիջապես պայքարեն «սպիտակ» արհմիությունների հետ միանալու ոգտին» :

Մի ամբողջ շարք յերկրներում , ինչպես , որինակ՝ Ամերիկայում , եմիգրանտ բանվորները (ուրիշ յերկրներից յեկողները) չափազանց ծանր պայմաններում են գտնվում : Բուրժուազիան ձարպերին տեղացի բանվորներին լարում և յեկորների գեմ , ոգավելով նրանից , վոր քաղցած եմիգրանտները պատրաստ են աշխատելու ամենացածր վարձով , և այդպիսով նվազեցնում ե Ա-մերիկայի ամբողջ բանվոր զաստկաբգի աշխատավարձը : Այդ բուրժուաֆիլու լավագույն միջոցն և եմիգրանտներին արհմիությունների մեջ գրավելը , նրանց մեջ աշխատանքներն ուժի-գացնելը : Կանգրեսը մատնանշում է , վոր եմիգրանտները , «այդ բայրը «ստարները» սովորաբար ավելի վատ իրավական պայման-ներումն են գտնվում , քան տեղական բանվորները , և բուրժուա-

զիսան սրանից ոգտվում և թե՛ ժեկի և թե՛ ժյուսների աշխատավարձը պակասեցնելու համար : Զգայուն ու ուշագիր վերտքերժունքը դեպի ոտարերկրյա բանվորները պետք և հեղափոխական արհմիությանների համար լինի տարրական կանոն» :

ԱՅԼ ՀԱՄՑԵՐ : ԳԱՂՈՒԹ- Յերբորդ կոնդրեսն հետո կանգ և ՆԵՐ ՅԵՎ ՄԵՏՐԱՊՈ- առնում Փաշիզմի դեմ պայքարելու ԼԻԱՆԵՐ :

Հետո կոռպերատիվների աշխատանքը վրա , վարպեսպի «բանվորական կոռպերատիվները դարձվեն պրո- լետարիատի դասակարգային պայքարի գենք» , Գյուղացիական ինսերնացիոնալին ամեն կերպ աջակցություն ցույց տալու ան- ձրաժեշտության , կանաց , յերիտասարդության մեջ , ՄԱՊՐ-ի և միջազգային բանվորական ոգնության ասպարիզում աշխատանք- ներն ուժեղացնելու , պատերազմի վտանգի դեմ պայքարելու աշ- խատանքների վրա և այլն :

Անհրաժեշտ է վորքան կարելի յե լավ կազմակերպել արթ- նացող զաղութային յերկրների , Արեւելքի բանվոր դասակարգը : Անհրաժեշտ է այլ միությունները գործնել հենարան յեկվո- պական իմպերիալիզմից գաղութային յերկրներն ազատելու նր- պատակով պայքար մղելու համար , զաղութներն իրենց մետրա- պոլիտաներից բաժանելու համար :

ՊԱՅՔԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՑԵՐ : Բայց ի հարկե Պրոֆինտերնի Յ-րդ ԱՐՃԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺ- կոնդրեսի հիմնական հարցը , նրա ու- ՄԱՆ ՄԻԱՄԱԿԱՆՈՒ- չաղբության կենտրոնն եր կազմում ԹՑԱՆ ՀԱՄԱՐ :

միջազգային արհշարժման միասնա- կանության հարցը :

Կարմիր Պրոֆինտերնը միշտ ել ձգտել է միացնել ամբողջ աշխարհի բանվորների ուժեղերը կապիտալի դեմ կովելու նոպատա- կով :

Արհմիությունների անջառումը , վոր ասած և դալիս ուժուու- ժիստների գավաճանական զործելակերպից , չափազանց թու- րացնում և պրոլետարիատի ուսպժունակությունը , զրկում և նրան հնարավորությունից համառորեն հանդես գալու առաջլազարդ կապիտալի դեմ : Ճիշտ և ամսաերգամցիները պատրաստ են հի- մա յել միանալ Պրոֆինտերնի հետ , նրանք միայն Պրոֆինտերնին և հեղափոխական միություններին առաջարկում են մի չափ «հա- սարակ» պայման . նախապես հրաժարվել ամենայն հեղափոխա-

Էւանսովյանից և ընդունել համաձայնողական ծրագիր : Ամստերդամցիք արդպիսի պայման դրին Վիեննայի կոնֆրենում (1924 թվին), յերբ նրանց «Ճախիթեր», ի գեմս անդիմական արհմիությունների, սկսեց սփոռել Մոսկվայի հետ «միասնական ճակատ» հաստատելու վրա :

Ի հարկե, այդ տեսակետից Պրոֆինաերնը վոչ մի զիջումի չենդառաջի և իր սրբութարական, կոմունիստական կոսովածությունը չի փոխի ու փորձիստական թթուի հետ : Պրոֆինաերնի յերրորդ կանգրեսը վորոշեց տմհն կերպ ուժեղացնել աշխատանքը բաժնե՝ բաժնե՝ բաժնե՝ յեղած արհմիությունների բանվորական մասսաների միջ, վորոպեսի «միասնական ճակատն» ստեղծվի ցածից, գեղին առաջնորդությունի վրայով : Միաժամանակ յերրորդ կոնգրեսը վճռում է, վոր արգեն հասել ե ժամանակը համաշխարհային արհմարժման միասնականությունը վերականգնելու հարցը սուր կերպով դնելու համար, գանցանակում ե՝ ժամանակն ե գեղին Ամբուարդամի խորխած բերդի վրա ալիքնամարտի դնալու :

Յեկեք զումարենք արհմիությունների միջազգային միացման համագումար : Թող ամեն մի յերկիր իր արհմիություններում բնողոքությունների և ծառայողների թվին համեմատ պատճամավորներ տա : Դուք, ամստերդամցիներդ և մենք, կոմունիստներս, աղասորին հանդես գանք մեր գաղափարներով և ծրագրերով, ու թող բանվորական լայն մասսաների պատվամայինությունը վորոշեն, թե ո՞ւմ հետ են ; մեզ հետ, թե՞ ձեզ : Դեղին Ամստերդամի կողմն էն, թե՞ Կարմիր Մոսկվայի : Հենց այդ միացման համագումարումն ել պետք և ընտրվի արհմիությունների նոր միասնական ինսերնացիոնալ : Բայ վորում փոքրամասնությունը սիետք և յենթարկի մեծամասնությանը, բայց այդ վոքրամասնության ըերանը փակել վոչ վոր չի կարող : «Միացյալ ինսերնացիոնալ» ընտրելուց հետո ցրվելու յեն թե՛ Ամստերդամի ինսերնացիոնալը և թե՛ Կարմիր Պրոֆինաերնը : Յեթե նոր ինսերնացիոնարում մենք վոքրամասնություն կարմենք, մեզ իրավունք ենք վերապահում այդ ինսերնացիոնալի ներում պայքարելու մեր գաղափարների համար :

Կարմիր Պրոֆինաերնը հարգածում է անվրեպ, նա վախենալու վոչինչ չունի, եյտպես նա արգեն այժմս իր հետեւց տանում և բանվոր գասակարդի մեծամասնությունը : Յեթե նույնիսկ նա ժամանակագրակես փոքրամասնություն կազմի, այնուամենայինիվ նա կարճ ժամանակում կը կարողանա նոր ինսերնացիոնալի ներսում կատարած իր աշխատանքով բանվոր գասակարգն ամբողջու

վին նվաճել : Ամստերդամի ինտերնացիոնալը տառանվում և հիմնեց , նա խախուս և և իր ուժերի վրա հավատացած չէ : Յեթե նա ամեն կերպ կը խուսափի միացման կոնքը և հրավիրելուց , ապա զըրանով նա վերջնականապես կը մերկացնի իրեն ամբողջ աշխարհի բանվոր գասակարդի առաջ : Ամստերդամիցիները կոնգրեսին կը գրանան , թե չեն գնում միենույն ե , թե մեկ և թե մյուս գեղքում հարսվածը նրանց համար կործանիչ է լինի : Ընդհակառակը , Պրոֆինտերնի համախմբած կարմիր արհմիությունները , վորոնք կապիտալի գեմմած մզած կուսիներում արգեն կոփված են և նոր ուժեր են ստանում անդրնդատ նրանց շաբաքը լցվագ բանվոր գասակարդի նորանոր հեղափոխական խավերից , վատահությամբ և հավատով են նայում ապագային : Պնդելով միացման կոնքը և հրավիրելու մասին , Կարմիր Պրոֆինտերնը վոչ միայն չի հարժարվում իր անհաջող հեղափոխական դործերակերպից , այլև հնարայիշություն և ստանում ցածրից հոգուում միասնական ճակատի հսկայական կամպանիա ծագայելով , քաշել նրա մեջ բանվոր գասակարդի ամենալայն խավերը : Միասնական ճակատի համար նրա մզած ամբողջ պայքարը բավարույն միջացն և բայրը յերկրների գեղին պրոֆեյտրուկրատներին վերջնականապես ջախջախելու , ամբողջ համաշխարհային տրհարժումը կոմունիզմի զբոշակի տակ համախմբելու համար :

Պրոֆինտերնի յերրորդ կոնգրեսը ընտրեց 17 հոգուց բազկայած մի հատուկ հանձնաժողով , հանձնարարելով նրան նախապատրամութել միացման կոնքը և գումարումը : Դրան զուգընթաց կոնդրեսը վորոշեց , վոր մինչեւ այն ժամանակ , քանի ոեռ ամստերդամցիները հեղափոխական միություններին չեն ընդունի իրենց բառ արտադրության գեղին ինտերնացիոնալի մեջ , միջազգային կարմիր պրատագանդայի կոմիտեները պետք ե գոյություն ունենան : Բայց յեթե հեղափոխական արհմիություններին թույլ կը տրվին գեղին ինտերնացիոնալների մեջ , հենց վոր այդ «ըստ արտադրության ինտերնացիոնալները կը համախմբեն բոլոր ուղղություններին պատկանող արհմիությունները , հենց վոր հեղափոխական արհմիությունները հնարայիշություն կունենան այդ ինտերնացիոնալների ներսում պայքարելու իրենց վաղավիարների համար , — պրատագանդայի միջազգային կոմիտեները կը ցրին» :

ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐՔ-
ՃՐԴՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵ : Միասնական ճակատի լոգունով
ամենից առաջ լայն արձականք դատվ
Անգլիայի բանվորական մասնակրի

մէջ : 1924թ. աշնանը , Հուլիում կայացած արեգ-յունիսների կօհութքներին հրավիրվել եյին խորհրդային արհմիությունների պատկամավորությունը , ընկ . Տոժսկու զիլիավորությամբ : Երանց ցույց ավեցին վոգեորգած ընտունելություն : Զնայած այն բանին , վար կոնդրեսն իր աշխատանքի բոլոր հարցերի վերաբերյալ , ընդհանուր առմամբ , ընդունում եր ուժիորմիտական վորոշումներ , բայց արեգ-յունիոնների դեղին առաջնորդները , բանվորական լայն մասների ճնշման տակ , ստիպված եյին վողջունելու Պրոֆինակերնի յերրորդ կոնդրեսի վորոշումը ամբողջ աշխարհի արհմիությունների միացման կոնդրես հրավիրելու մասին : Հուլի կոնդրեսը մի վերջին անգամ ցույց տվեց , վոր Արեմուտքի բանվորների մէջ բավականին աճել և Պրոֆինակերնի ազդեցությունը , ինչպես նաև ցույց տվեց Խ . Ս . Հ . Մ .-ի հսկայական դերը պրոլետարիատի միջադրային պայքարի գործում :

Անդիմական պարլամենտի վերջին ընտրություններին կոնսերվատորները խոչոր հաջողություն առնեցան , նրանք ոգտագործեցին Մակդոնալդի համաձայնական կառավարությունն իրենց կեզառու նպաստակների համար (Դոուեսի պլանը կիրառելու համար և այլն) , իսկ հետո զոնից գուրք հանեցին : Անդիմայի բանյարական կուսակցության պարլամենտական պարտությունն ընդհանուր վախկուությունը և անվճականությունը բաց են առում բանվորական լայն մասսաների աչքերը : Անդիմայում գասակարդային արդ ինքնակիտակցության և գասակարգային սրայքարի սուրբ կերպարանք ստանալուն նպաստում և Բոլդուինի նոր կոնսերվատիվ կառավարության բաց ափաշկարար և հարյուրակային և իմպերիալիստական քաղաքականությունը : Անդիմական պրոլետարիատի շարքերում հասունացող հեղափոխական առաջընթացաւմներին արտահայտվեցին նրանով , վոր Անդիմայի արեգ-յունիոնները յեղբայրական պատգամագորություն ուղարկեցին Խ . Ս . Հ . Մ .-ի արհմիությունների նրա համագումարին : Այդ պատկամավորությունը բարկացած եր արեգ-յունիոնների աչքի ընկող առաջնորդներից՝ Արտուր Պերսելից , Բեն Ֆիլիսից , Բրոմլեյից և արիչներից , վորոնք անդիմական արհշարժման և Ամստերդամի ինտերնացիոնալի ձախի թերթ գլուխն են կանգնած : Հենց այդ համագումարումն ել ստեղծվեց անդուխորհրդային կոմիտե : Համաշնաբահային արհշարժման միասնական ճակատ ստեղծելու համար , միասին պայքար մղելու համար , Անդիմայի բանվոր դա-

սակագի և Խորհրդային Միության բանվարների միջև սերտ ձուլմն՝ կազ հաստատելու համար մի քայլ եր արվեց :

Վերջին ԱՄԻՄՆԵՐ 1924 թ. ընթացքում համաշխարհային անտեսությունը վորոշ չափով առաջ գնաց :

կապիտալիզմը մասամբ ամբացավ : Սակայն, քիչ թե շատ կարոն շավասարակառության համելու համար գեռ ևս չատ կա: Յեվոպական յերկրներում քարածուխ և յերկաթ ավելի քիչ և արդյունահանվում, քան պատերազմից առաջ: Առաջ զնացող Ամերիկան իրերի թերապությամբ աստիճանաբար սովորվում և Անգլիայի հետ կոմի գուրու գալու: Ակնհայտնի կերպով մրցումն և կատարվում զինվելու գործում ծովերի վրա իշխելու նոպատակներով: Ամերիկան փորձում և անտեսապես նվաճել անգլիական գաղութները (Կանադան, Ավստրալիան), կատարվում և պայքար նավթի, վաճառքի չուկաների, հումք նյութ ներմուծելու և արտահանելու համար: Զնայած արդյունաբերական վերելքին, Ամերիկայում կան 2 միլիոն գործազուրկներ: Վերջին տարեների ընթացքում առաջին անգամ յերեան յեկավ գործազրկությունը նաև գաժան Փինանսական ճգնաժամ ապրող Ֆրանսիայում: Գերմանական արդյունաբերողները առ այժմս ոգտագործեցին Դոուեսի ծրագրի շահագիտա կողմէրը, ստացան փոխառություն, 9 և 10 ժամ յա բանվարական որ սահմանելու չնորհիվ աժանացըրին իրենց աշխատանքները, ուժեղացըրին նրանց վաճառքը: Սակայն այդ հաջողությունների վերջն արդեն նկատվում է: Վորպեսզի Գերմանիան կարողանա ոնկազարցիաները վճարել, նա պետք և չստ արտահանի, գերմանական եժան ապրանքների արտահանումը նշանակում է Անտանտայի յերկրներում սուր կերպարանք տալ արդյունաբերական ճգնաժամին և գործազրկությունը: Այս կախարդական ըրջանից յելք չկա:

Ամենածանրը Անգլիայի գրությունն է: Ամբողջ 1924 թ. ընթացքում յերկիրը զանգում եր արդյունաբերական բավականին ծանր ճգնաժամի մեջ: Անգլիական հզոր մանածագործական արդյունաբերությունը շարաթական աշխատում և չորս որ, գոմեննի վառարանների մի նշանակալից մասը հանգած են, նավաշինարանները մեծ մասամբ չեն գործում: Բանվորի ուսալ աշխատավարձն իջել (Հ*), գործազուրկների թիվը 1925 թ. սկզբին նորից և աճել,

*) 1924 թ. հուլիսին նվազագույնն Անգլիայում կազմում եր

Հասնելով յերկու միլիոնի, զրությունը վատանում է նաև չնորդիկ այն հանգամանքի, վոր անդլիական գաղութներում արդյունաբերությունն արագորեն զարգանում է և, այլպիսով, անդլիական առարանքների համար պակասում են վաճառքի շուկաները, բացի զրանից Անդլիան ստիպված է համաշխարհային տիրապետության համար ծանր պայքար մղել Ամերիկայի հետ և Ֆրանսիայի հետ՝ Տեղապայայում արբասկետությունն իր ձեռքում պահելու համար։

Պատահականություն չեւ, որեմն, վոր անդլիական արհեստական շարժումը աստիճանաբար ձախանում է : Հենց անդլիական արեգ-յունիաններն են, վոր հանդես են գայիս իրրենախանուղներ արհեստական շարժման միաննականության պայքարում : Դասակարգային պայքարի տեմպն Անդլիայում աճում է : 1925 թ. հունվարին կայացավ անդլիական արհշարժման հեղափոխական փոքրամասնությունը կոնֆերանսը : Այդ հեղափոխական փոքրամասնությունը անդլիական արհմիանությունների ճախ թիվը նորանույթ և ատրեւրվում, վոր ամրողովին կանգնած է կոնդունիտական պլատֆորմի վրա և արգեն կարողացել է իր չարչն համախմբել 600,000 մարդուց բաղկացած մի ակնածելի մասսա : Առաջին անդամ այս կոնֆերանսությամբ հաջողվեց միացնել, ձուլել Անդլիայի արհշարժման մեջ աշխատաղ բոլոր ցաք ու ցրիվ հեղափոխական խմբաների գործողությունները : Միասնական ճակատի լոգունով, վորին լոյնորեն ոգնում են անդլիական արեգ-յունիանները, դաս-

նախապատերազմականի 170 տակոսը, իսկ նույն առաջա գեկտեմբերին—181 տոկոսը : Մինչդեռ 1924 թ. հունվար-հունիս ժամանակաշրջանում Անդլիայում բանվորներին մի շաբաթվա տշխատավարձ է վճարված 560,900 ֆունտ սուերլինգ, իսկ 1924 թ. հունիս-հունիսմբեր ժամանակաշրջանում—տշխատավարձն իշել է մինչև 518,350 ֆունտի :

Ֆրանսիայում, Փարիզում 1924 թ. հուլիսին ապրուստի նը- վապագույնը կազմում է նախապատերազմական մակարդակի 360 %, իսկ նոյեմբերին—396 ու կես, իսկ բանվորի տշխատավարձը բոլորովին չի բարձրացել :

Միացյալ Նահանգներում 1924 թ. հունիսին ապրուստի նը- վապագույնը կազմում էր նախապատերազմականի 170,5-ը, իսկ 1925 թ. հունվարին—185 % : (Աշխատավարձը բացառությամբ յերկաթուղայինների մաս չնչին բարձրացման) չի բարձրացել ընդհակառակը, շատ տեղերում (մանավանդ մահածազործական արդյունաբարերության մեջ) իշել է 10-,5-ով :

նում և ավելի ու ավելի ժողովրդական, բանվորական լայն մասսաներ գրավող, հետեւապես և, ել վատանգավար պահանջ ռեֆորմիստների համար։ Ամսուերգամի ինտերնացոնալը, 2-րդ ինտերնացիոնալի հետ միասին, պատասխանեցին դրան սիստեմատիկ սարսուածով։ Անդիմական արեգ-յունիոնների պատվամթավորությունը ճառապարհարկեց Խ. Ս. Հ. Մ.-ում և վերագրանալուց հետո առանց գուշակորելու պատմեց անդիմական բանվորներին, վոր ամբողջ բուրժուական մամուլի հնարած և սպիտակ գվարդիականների տարած «արքափները» Խորհրդավիճ Ռուսաստանի մասին—կատարելապես սուտ են, վոր Խորհրդավիճ Սոցիալիստական Հանրապետությունների Միության բանվորներն ու գյուղացիները Հրաչյալի Էկրովով յորա յին զնում առանց կապիտալիստաների և կարգածառերի, իրենք գննդապորեն, բայց անշեղորեն վերականգնում են իրենց անտեսաթյունը, բարելավում են իրենց վիճակը, կառուցում են նոր սոցիալիստական հասարակություն։ Ի պատասխան գրան 1925 թ. Հունվարին Ամսուերգամի և 2-րդ ինտերնացիոնալների գործադիր կոմիտեների միացյալ նիստը անդիմական զեկուցիայի յիւրույն հայտարարեց—«սպառնալիք Սոցիալիստական ինտերնացիոնալի սկզբունքներին» (Հմա՞ սպառնալիք միջազգային բարեւուագիայի շահերին)։ Միաժամանակ անդիմական պատվամթավարության վրա հարձակվեց միջազգային սոցիալ-դեմոկրատիան։

Ամստերդամի աջ և ձախ թիկնիքի կողմանը միմիանց դեմ խիստ սուր կերպարանք ստացավ 1925 թ. փետրվարին, Ամստերդամի հնագույնագիտական Գործկոմի լայնացրած նիստում։ Զախ թիկնորից պարագեց : Ամստերդամին հայտարարեց, վոր նո Հ. Ա., Մ. Կ. Է. Ռ. Հ. Ե. Հ. Հանակցությունների մեջ կը մտնի միմիայն այն գեղգում և նրանից հետո, յիր վերջինն առանց առարկության կը մտնի իր կազմի մեջ : Այսպիսով, առ այժմու—սպիտակ յեղնիկի հեքիաթը շարանակվում է : Ամստերդամից աղնվորեն պաշտպանում են բարժառապետայի շահերը :

Սակայն միտունականության համար մզգած կովում խորհրդացին արհմբությունները կարողացան մի շարք խոչըն հաղթանակներ տանել: 1925 թ. ապրիլին Լռողոսի կոնֆերանսում հաջողվեց ընդհանուր Եզրու գտնել Մեծ Բրիտանիայի և ու կես միլիոնանոց բանվորական մասսայի և Խ. Ս. Հ. Մ.-ի արհեստակցականորեն կազմակերպված 6 ու կես միլիոն բանվորների միջև: Այդ կոնֆերանսում Ենթայի և Խ. Ս. Հ. Մ.-ի արհարժեմոն ներկայացուցիչները

ըր միաձայն ընդունեցին մի գելլարացիս, վորով գատապարտում են Ամսուերդամին և մանրամասնորեն զարգացնում են պրոլետարիատի հեղափոխական-դասակարգային խնդիրները՝ միջազգային կապիտալի դեմ միասնական ճակատ ստեղծելու համար պայքարելու գործում ։ Այդ նույն կոնֆերենցիայում ստեղծվեց Մեծ Բրիտանիայի և Խ. Ա. Հ. Մ. Դ. ի արհամարժաման միացյալ խորհրդակցական կոմիտե, բացի դրանից, Հ. Ա. Մ. Կ. Խ. Դ. ի կից ստեղծված և արտաքին հարաբերությունների հանձնաժողով, վորի նպատակն ե կողմանի հարաբերությունները ձեւակերպել այն բոլոր միջոցները, վոր ձեռք և առնում Հ. Ա. Մ. Կ. Խ. Դ. որ միասնականության համար պայքար ընդունելու :

Կոնֆերենցիայի բոլոր վորոշումները քննվեցին և ընդունվեցին անդիմական արեգ-յունիոնների հերթական համագումարում ։ Սկարբորոյում (1925 թ. սեպտեմբեր), վորուել ձախ թեր գնուականություն ստացավ : Բացի միասնականության ողափին բանաձեւ բնդունելուց, կոնդրեսոր առաջին անգամ արտահայտվեց ընդունելու իմպերիալիզմի և գաղութների ճնշման, ընդունելու պատերազմների վտանգի, ընդգեմ Դուռեսօփ պլանի և այլն : Հեղումությանացվող բանվորական մասսաների ճնշման տակ անդիմական տրեգ-յունիոնները գանգազ, բայց հաստատուն կերպով չըրսչը վում են դեպի ձախ : Արգեն համագումարից առաջ կայացած անդիմական արհամարժաման հեղափոխական փոքրամասնության կոնֆերանսուր իր պլատֆորմի շուրջն հավաքել եր 800,000 մարդ :

Այսպիսով, միասնական ճակատի գաղափարը աճում և ամրանում է վոչ միայն այն պատճառով, վոր անդիմական և խորհրդային արհմիությունների 11—12 միլիոնանոց բանակը նրա կողմն է : Հոգուության յետ աշխատում համաշխարհային կապիտալիզմի խորը ճգնաժամքը և անկայունությունը, միասնականության կողմն և նաև արթնացող Արեւելքը, վորը հզորապես շարժում է իմպերիալիզմի հիմունքները, միասնականության համար են աշխատում ամրող աշխարհի կոմկուսակցությունները : Բոլոր յերկրների բանվոր գասակարգի հիմնական մասսաները ավելի ու ավելի յեն հավաքում Արհմիությունների կարմիր ինտերնացիոնալների դրաշակների տակ : Այդ գրոշակների և կոմինտերնի ուղեցույց ասազի տակ, քայլ առ քայլ, կատաղորեն կովելով համաձայնականների և միջազգային բարեմատադիմայի դեմ, վստահ ու համոզված ընթանում են բարոր յերկրների կարմիր արհմիությունները գեղի համարհային արհամարժաման միասնականության իրականացումը,

զեսպի ձուլումն ու համախմբումը ամրող աշխարհի պրոլետարների՝ հանուն կոմունիզմի սկայքարելու համար :

ԱՏՈՒԳ-ՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Մինչ 1914 թիվը արհամարժման ի՞նչ միջազգային կենտրոններ կային և արդյո՞ք նրանք հեղափոխական ելին :
2. Պատերազմն ի՞նչո՞ւ քանդեց բանվորական և արհեստական շարժման միջազգային կապերը :
3. Միությունները պատերազմի ժամանակ արդյո՞ք կովում են ին կապիտալի գեմ :
4. Ի՞նչով արտահայտվեց համաշխարհային կապիտալիզմի հետպատերազմյան ճնշումամբ :
5. Ի՞նչով բացարձել, վոր պատերազմի վերջանալուց հետո բուռն կերպով աճեց արհմիությունների անդամների թիվը :
6. Վորոնեց ևն այն պարմանները, վոր նպաստեցին արհմիությունների Ամստերդամի ինստիտուտի կազմակերպելուն :
7. Ի՞նչով և արտահայտվում գեղին Ամստերդամի աշխատակցությունը բռնը ուղղիայի հետ :
8. Ինչպես և յերբ ծագեց Կարմիր Պրոֆենտերնը : Վո՞րն և նրա ծրագիրը :
9. Ի՞նչից առաջացավ և ի՞նչ չափեր ընդունեց կապիտալի առաջխաղացման հաջողությանը (մահավանդ Անգլիայում և Իտալիայում) :
11. Ի՞նչ և «միտմական ճակատի» գործելակերպը և ի՞նչո՞ւ անհրաժեշտ և բանվոր գտակարգին :
12. Ի՞նչպես և ի՞նչու ամստերդամցիները քանդում են միասնական ճակատը :
13. Վորո՞նք եր ընթանում կապիտալի առաջխաղացումը Պրոֆենտերնի յերկրորդ և յերրորդ կոնգրեսների միջանկալ ժամանակամիջոցում : Ի՞նչ նշանակություն ուներ Ռուրի գրավումը :
14. Ի՞նչպես եր ընթանում կապիտալի առաջխաղացումը Պրոֆենտերնի յերկրորդ և յերրորդ կոնգրեսների միջանկալ ժամանակամիջոցում : Ի՞նչ նշանակություն ուներ Ռուրի գրավումը :
15. Ռուրի գրավմանը և նոր համաշխարհային պատերազմի սպառնացող վտանգին ի՞նչպես պատասխանեց Ամստերդամը և ի՞նչպես Պրոֆենտերնը :

16. Ի՞նչո՞ւ Ամստերդամի մեջ առաջացավ «Ճախ» թիւ և գույքն և նրա ելությանը :

17. Աւժերի ի՞նչ փոխարարելություն ունելին Ամստերդամն ու Պրոֆինտերնը վերջինիս Յ-րդ կոնդրեսի ժամանակ :

18. Վորո՞նք են Պրոֆինտերնի Յ-րդ կոնդրեսի հիմնական գործումները :

19. Ի՞նչ առաջ Պրոֆինտերնի Յ-րդ կոնդրեսը արհշարժման միանական ձևականի մասին :

20. Միջազգային արհշարժման միացման կոնդրես հրավիրելու արդյո՞ք նշանակում է, թե պիտի դադարեցնել կոնդրես ու Փորմիստերի ժեմ :

21. Ի՞նչ է անդրո-ռուսական գործողության կոմիտեն :

22. Ամստերդամն ի՞նչ վերարերժունք ցույց տվեց միացման կոնդրես հրավիրելու առաջարկին :

23. Ի՞նչն է անխուսափելի դարձում արհշարժման միանականության հաղթանակը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

В. ФОСТЕР—Волны раб. революции в 1918—21 г. г. Изд. Кр. Нов.

А. ЛОЗОВСКИЙ—Основные моменты развития международного профдвижения.

А. ЛОЗОВСКИЙ—Наша тактика в профдвижении.

А. ЛЕБОВСКИЙ—Мировое профдвижение до и после войны.
Царь НИТ.

Профсоюзы и фабзавкомы—Сборник, изд. Профинтерна.

Единый фронт в профдвижении—Сборник, изд. Профинтерна.

М. ТОМСКИЙ—К единству международного профдвижения.

ЯРОЦКИЙ—Профсоюзы СССР на Гульском конгрессе.



20.	Վիշնիվեցլի .— «Աչխատանքի հաշմանդամների ապահովագրումը»	20
21.	«Կանոնադրության գործարկումներին և անդկումներին կից կուլտ-հանձնաժողովների»	5
22.	«Որինակելի կանոնադրություն բանակումրի , կարմիր անկյան և ֆիզ-կուլտի խմբակի»	25
23.	Սենյուշին .— «Ակումբային աշխատանքի խնդիրները»	30
24.	Լ. յ ա շ կ ո ւ .— «Գողերը»	5
25.	» .— «Առաջին կարմիր դրոշը»	10
26.	Սպերանսկի .— «Տուրերկուլուորը»	10
27.	«Յելիք պայքարի , ստրուկ գաղութիր» , (ինսցենիր)	10
28.	«Փոխողնության գանձարկղների կազմակերպման կարգը»	10
29.	Յ ի ն .— «Բուռաստանի արհարժման 20 տարին»	50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները» , (ապագրվում է)	
31.	Բողենիքեղ .— «Ինչո՞ւ և ինչպես պետք և ուսումնասիրից արհարժուածը»	20
32.	» .— «Բանվորական՝ առաջին միավորումները կտպիտալիկմի արշալույսին»	20
33.	» .— «Ի՞նչպես առաջացան և ինչպես եյին աշխատում առաջին՝ արհմիությունները»	70
34.	» .— «Արհեստակց շարժուած մինչև 1914 թ.»	30
35.	» .— «Արհեստաիցական շարժուած համաշհարփիյին պատերազմից հետո»	30
36.	» .— «Արհեստակցական շարժուածն Բուռաստանում (1905—25 թ.)»	80
37.	» .— «Ի՞նչ ե արհեստակց արտադրական միությունը: Արհմիությունը կուսակցությունը»	15
38.	» .— «Ամստերդամ և Մոնլիվա»	35
39.	» .— «Ի՞նչ ե պրոֆմիության կանոնադրութ»	55
40.	» .— «Ի՞նչ ե հավաքական պայմանագիրը»	60
41.	» .— «Ի՞նչ ե տալիս բանվ. աշխ. որենսգիրքը»	35
42.	» .— «Ի՞նչ ե սոց. ապահովագրությունը»	40
43.	» .— «Աշխատանքները բանակումբում»	
44.	Պրոֆաշխատանքը գյուղում:	30
45.	«Պրոֆ դրագիստության դասագիրք»	

ՄԵԾԱՐԱՆԱԿ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԶԵՂՋ

ՀՅ Ազգային գրադարան



NL0945039

97

-50-

1926p.

ԳԻՆ Ե 35 ԿՈՊ.

692

880